№ 92 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 30 — 1908 — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 30 № 92

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ" Базарная ул. д. Тамамшева № 16. կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ
Տէլէֆօն № 253.

ԹԻՖԼԻՍԻ ՄԱՐԻԱՄԵԱՆ-ՅՈՎՆԱՆԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ

Հոգաբարձութիւնը

յայտնում է, որ եկսեrն քննութիւն առնողներն իրանց խնդիրները պէտք է ներկայացնեն մինչեւ մայիսի 10-ը, որից յետոյ կը սկսվեն քննութիւնները և կը վերջանան մայիսի 20-ին:

(Հ. Վ.) ա. 2—1

ԲԺՇԿԱՊԵՏ

Ա. Բաբայեանը

այս ամառ շարունակելու է ընդունել ներքին և ջղային հիւանդներ Կիսլովոդսկում և Եսսենտուկում, մայիսի 16-ից մինչև սեպտեմբերի 15-ը:

[Հ. ու. Վ.] ա. 12—1

Լոյս տեսաւ

„ԾԻԾԱՂԱԲԵՐ"

Հայրիկ, Պարոնեան, Պըլը-Պուղի, Մոլլա-Նասր-Էդդին և ուրիշ ազգային ու օտար զուարճախօսներ:

182 ԸՆՏԻՐ զուարճախօսութիւն—անեկդոտներ, 112 երես, գինը՝ 20 կոպէկ:

Դիմել գրավաճառներին: Ինձնից գումարով գնողներին 20% զեղչ և ճանապարհածախսըն իմ հաշւին: Մշտական հասցէս՝ Тифлисъ, Хачатуру Хачатріанъ, 9 уч. Лысогорскій пер. № 10.

(Հ. ու. Վ) (ա.) 10—4

Նկարիչ ԱՐՇԱԿ ՖԷԹՎԱՃԵԱՆԻ

ՋՈՒՏ

ԱԿՎԱՐԷԼՆԵՐԻ

Ցուցահանդէսը

բաց կը մնայ մինչև կիրակի մայիսի 1-ը: Կովկասեան գիւղատնտեսական կայսերական ընկերութեան դահլիճներում. Բարեատինսկայա փողոց.

Ցուցահանդէսը բաց է ամէն օր առաւօտեան ժամը 10-ից մինչև երեկոյեան ժամը 5-ը:

Մուտքը արժէ 30 կոպէկ: Աշակերտները և զինւորները վճարում են կէսը:

(ա. օ.) ա. 20—14

## ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

—

Մթերքները թանգացել են:

Բայց մանաւանդ թանգացել է միսը, որի գինը վերջին շաբաթներում Թիֆլիսում բարձրացել է այնքան, որպիսին երբէք չէ եղել նախկին տարիներում:

Շատերը զբաղված են թանգութեան պատճառների լուսաբանութեամբ: Թիֆլիսի նահանգապետը մի յատուկ խորհրդակցութիւն հրաւիրեց այդ խնդրի պարզաբանումի համար: Անասնաբուժական ընկերութիւնը նուիրեց իր նիստերից մէկը այդ խնդրի ուսումնասիրութեան: Մի քանի անգամ նոյն հարցով զբաղվել է Թիֆլիսի քաղաքային դուման, որը նոյնիսկ մի յատուկ նիստ նուիրեց այդ խնդրի քննութեան:

Յայտնվեցին զանազան կարծիքներ, առաջ բերվեցին իրական կեանքից մի շարք դէպքեր, որոնք պարզում էին այն ազդեցութիւնները, որոնք փոփոխում էին մսի գները դէպի վեր և դէպի վայր:

Անշուշտ, այդ ազդեցութիւնների մէջ կան յարատև կամ արմատական բնաւորութիւն կրող, կան և ժամանակաւոր նշանակութիւն ունեցող հանգամանքներ:

Պէտք է վերլուծել այդ ազդեցութիւնները և զատել մէկը միւսից, միևնոյն ժամանակ պարզել թէ ո՞րը չէ կարող փոփոխվել մարդկանց միջամտութեան շնորհիւ և ո՞րը ենթակայ է այդ միջամտութեան ներգործութեանը:

Շատ ցանկալի է, որ թէ քաղաքային ինքնավարութիւնները և թէ մասնագիտական ընկերութիւնները լուրջ կերպով ուսումնասիրէին այդ կարևոր մթերքի թանգանալու պատճառները և պարզէին խնդրի դրական և բացասական կողմերը:

Մի շարք դիտողութիւնների վրա հիմնված մենք պէտք է յայտնենք, որ մսի գինը այլ ևս չէ կարող վերադառնալ իր նախկին շատ ստոր գներին. բայց ուղիղ է և այն, որ վերջին շաբաթների թանգ գները հետևանք են որոշ ժամանակաւոր ազդեցութիւնների:

Մենք չենք խօսում այստեղ մսավաճառների շահագործութիւնների մասին, որովհետև նրանք միշտ էլ գոյութիւն են ունեցել թէ ներկայ շատ բարձր և թէ նախկին աւելի մեղմ գների ժամանակ:

Ներկայումս մսի չափազանց թանգանալը արդիւնք է երեք ազդեցութեան, որոնցից մէկն է այն, որ գարունը սկսվել է և գիւղացիները հնարաւորութիւն ունենալով իրանց անասուններին կերակրել արօտներում, այլևս ստիպված չեն ծախելու նրանց, երկրորդ, որ նախկին տարիների աննպաստ հանգամանքների շնորհիւ պակասել է տնային անասունների թիւը գիւղերում և գիւղացին եթէ կարողանար՝ ինքը կը գնէր անասուններ իր տան տնտեսութեան համար, և երրորդ, որ շնորհիւ առևտրական և ընդհանրապէս տնտեսական գործերի ընդհանուր խախտման, բանկային տոկոսների մեծութեան և գիւղատնտեսական պարապմունքի ճգնաժամային դրութեան, ծանրացել է անասնավաճառութեան գործը:

Անշուշտ, եթէ գիւղերում առաջ գան այնպիսի աննպաստ հանգամանքներ, որոնք ստիպեն գիւղացիներին հրաժարվել իրանց տնային անասուններից, օրինակ պետական և հասարակական տուրքերը հատուցանելու կամ մինչև առաջիկայ հունձը հաց գնելու համար, այն ժամանակ նորից մեծ քանակութեամբ տաւար կերևայ վաճառանոցում և նրա գները մի որոշ աստիճան կիջնեն:

Տնային անասունների թիւը վերջին տարիները պակասել է գիւղերում զանազան ազդեցութիւնների շնորհիւ և նրանց պահել պահպանելը դժուարացել է: Այս երևոյթը մինչև այժմ յատուկ ուսումնասիրութեան և վիճակագրական հետազօտութեան առարկայ չէ եղել:

Ժամանակն է այդպիսի ուսումնասիրութիւններ և հետազօտութիւններ կատարելու:

Ա. Քալանթար

## ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Պետերբուրգ, 28 ապրիլի

Պետական Դումայի նիստի ժամանակ մինիստրների խորհրդի նախագահ Ստոլիպինի՝ Դումայի նախագահ Խոմեակովին ուղղած նամակի լուրը, ինչպէս և Ստոլիպինի հրաժարականի մասին պտտող շշուկները յուզեցին Դուման: Նամակի պատճառն այն է, որ Խոմեակովը ֆինանսների մինիստրի յայտնի նկատողութիւնը որակեց իբրև անպաշտ դարձուածք:

Կոկօվցեվը, լուրերին նայած, հրաժարական է տուել:

Ուրբաթ, ապրիլի 25-ին, երեկոյեան Խոմեակովը ներկայացաւ Ստոլիպինին, ուր և հրաւիրված էր ֆինանսների մինիստրը: Պարզվեց, որ Կոկօվցեվը նպատակ չունէր վիրաւորել Պետական Դուման և իր ֆրազին այն նշանակութիւնը չէր տալիս, ինչպէս նա վերջում ստացաւ: Նա Դումային էլ կը յայտնէր այդ, բայց Խոմեակովի նկատողութիւնը նրան այդ հնարաւորութիւնից զրկեց: Խոմեակովն էլ իր հերթին զգաց իր անարդարութիւնը և համաձայնվեց պարզաբանվել այդ մասին:

Շաբաթ օրը միջադէպը այլ կերպարանք ստացաւ: Խոմեակովը առաւօտեան Ստոլիպինին գրած նամակում խոստովանվեց իր գործողութիւնների անճշտութիւնը և իբրև պատասխան նրանից մի տաք նամակ ստացաւ, որի մէջ ասված էր, որ եթէ չաջողվի վերջ տալ միջադէպին՝ մինիստրների խորհրդի նախագահը ստիպված կը լինի հրաժարական տալ: Խոմեակովը պատասխանեց ամբիոնից, ընդունելով անկորրեկտ իր նկատողութիւնը ֆինանսների մինիստրի հասցէին: Կոկօվցեվը, անկասկած բաւարարութիւն ստացած, երեկոյեան ներկայ եղաւ Դումայի բիւջէտային մասնաժողովի նիստում, ուր համաձայնեց երկաթուղային վարչութեան գումարների ելմտի մասին արված նկատողութիւններին:

Երկրորդ Պետական Դումայի կովկասցի պատգամաւորներին, որոնք դատապարտվեցին վըբորգեան կոչի համար, աքսորում են՝ Տերեթելուն—Օդեսսայի, Ջափարիձէին—Խարկովի, Լոմտատիձէին—Սեվաստոպոլի և Մախարաձէին—Սիմֆերոպոլի բանտերը: («Кав.»)

—

Կալկաթայում երևան է եկել մի ընդարձակ դաւադրութիւն անգլիացի պաշտօնեաների դէմ:

Անգլիական ոստիկանութիւնը խուզարկութիւններ է կատարել և գտել է մի քանի պատրաստի ռումբեր ու մեծ քանակութեամբ պայթուցիկ նիւթեր:

Կալանաւորված են 25 հոգի, որոնց մօտ գտնված են վարկաբեկող փաստաթղթեր, որոնք ցոյց են տալիս, որ գոյութիւն ունի մի լաւ կազմակերպված դաւադրութիւն ուղղված անգլիացի բարձրաստիճան պաշտօնեաների դէմ:

—

Թէհրանում հրատարակվող «Մուսաւաթ» լրագրում մօտ օրերս լոյս է տեսել մի յօդուած, որի մէջ յիշատակված է շահի մասնաւոր կեանքի մի քանի անհօրմալ երևոյթների մասին:

Շահը այդ բանի համար պատասխանատուութեան է ենթարկել վերոյիշեալ լրագրի խմբագրին:

Դատարանում մեղադրեալը ներկայացրել է փաստացի տեղեկութիւններ, որոնք վկայում են նրա ցուցմունքների ճշմարտութիւնը:

Դատախազը հրաժարվել է մեղադրանքից և լրագիրը շարունակում է լոյս տեսնել անարգել:

—

Լոնդոն, 29 ապրիլի

Բէյթերի գործակալութեան Տանժէրից ստացած տեղեկութիւնների համաձայն, Մուլէյ-Հաֆիզը նամակով յայտնել է դեսպաններից մէկին, որ նա կը կամենար նախազգուշութիւն երևան հանել Եւրոպայի վերաբերութեամբ, սակայն նրան այդ բանում խանգարում են Ֆրանսիայի գործակալները և Աբդիւլ-Ազիզի ինտրիգները. Նա մտադիր է յարձակվել Ռաբատի վրա, որի մասին սակայն վաղօրօք կը նախազգուշացնէ եւրոպացիներին: («Հ. Դ.»)

—

Կ. Պօլիս, 29 ապրիլի

Ֆրանսիական դեսպան Կոնստանը յայտնեց Բ. Դրան ուղղած վերջին նօտայում, որ դեսպանատունը, քանի որ անկարող է Բ. Դրան հետ համաձայնութեան գալ Էրէկլիի հանքերի գործում, բանակցութիւնների շարունակութիւնը անօգուտ է համարում և, տեղեկացնելով այդ մասին իր կառավարութեան, սպասում է յետագայ կարգադրութիւնների: («Հ. Դ.)

—

Պետերբուրգ, 28 ապրիլի

Պաշտօնագուրկ է լինում Էջմիածնի հայ-լուսաւորչական սինօդի պրոկուրօրի պաշտօնից Ֆրենկէլը, մնալով արդարադատութեան մինիստրութեան մէջ: («Кав.»)

—

Քութայիս, 28 ապրիլի

Այսօր, ժամը 12-ին, Գ. Խ. Չինգիըու նախագահութեամբ բացվեց մարգանեց արդիւնաբերողների II հերթական համագումարը: Առայժմ եկել են շատ քիչ պատգամաւորներ: («К.»)

—

Կիև, 29 ապրիլի

Կարևոր գործերի քննիչի կարգադրութեամբ ձերբակալեցին խուզարկու բաժնի նախկին կառավարիչ Ասլանովին և գործակալ Զէլօյին: («Հ. Գ.)

—

Կ. Պօլիս, 29 ապրիլի

Ժամանեց գեներալ կոմս Ռոբիլանտ և անմիջապէս իտալական դեսպանատան առաջին թարգմանի ուղեկցութեամբ գնաց Երլդըզ-Քէօշկ ներկայանալու համար սուլթանին: («Հ. Գ.»)

—

Ուրմիա, 29 ապրիլի

Չիարիկի կառավարիչ Իսմայիլ աղան օգնութեան կանչեց շէկակ ցեղի բոլոր բէգերին: Իսմայիլ-աղայի և Ուրմիայի միջև այս րօպէիս կռիւ է: Չիարիկը գտնվում է Իսմայիլ-աղայի ձեռքում:

Ուրմիա-Սալմաստ ճանապարհին հանգստութիւն է, որովհետև քիւրդ աւազակախմբերի մեծ մասը անցաւ Իսմայիլ-աղային օգնելու համար: («Հ. Գ.»)

—

Վորոնէժ. 24 ապրիլի

Ապրիլ 22-ին, ցերեկուան ժամը 12-ի ատենները, հետևեալ սոսկալի դէպքը տեղի ունեցաւ: Նահանգապետը եկեղեցի պիտի երթար, ուսկից զօրաց հետ նուագածութեամբ պիտի անցնէր քաղաքին մէջէն Թագաւորական տօնին առթիւ: Ժամը 12-էն 17 րոպէ անցած՝ ուժեղ ձայն մը լսուեցաւ, Թնդանօթի ձայնէն աւելի սաստիկ. Իսկոյն բոլոր ժողովուրդն սկսաւ ձայնին վայրը հաւաքուիլ, ճիշտ մեծ սեմինարիայի դիմաց, ուր ռումբ ձգած էին նահանգապետին վրայ: Բարեբաղդաբար մարդկային զոհեր չկային. 5—6 հոգի վիրաւորուած են, ի միջի այլոց քաղաքապետին բնտանիքը ոտքերէն ծանր վէրքեր ստացեր է: Մերձակայ տանց ապակիները բոլորն ամբողջովին ջարդուեր էին ու կառքին ալ ետևի կողմն ամբողջովին ջարդուեր էր: Հազարաւոր ժողովուրդը դէպքին վայրն ամբողջովին ծածկեր էր. քանի մը վայրկեան վերջը դէպքին տեղը եկան պրիստաւը և կօզակներու մի խումբ: Յանցաւորը քառասուն տարեկան կնիկ մըն է. չարագործուհին, որ ինքն ալ ծանր վէրքեր ստացեր է, անհրկիւղ կերպով խոստովանեցաւ իր յանցանքը, բայց երբ հարցուցին դէպքին շարժառիթը, նա պատասխանեց, թէ «ինքը նահանգապետը լաւ գիտէ այդ բանը»: Յանցաւորն իր անուն-մականունը, ուսկից գալը կամ ով ըլլալը ոչ ոքի չէ ըսած մինչև հիմա: Կօզակները մինչև ժամը 3-ը հազիւ կրցան ժողովուրդը ցրել իրենց մերկացուցած սուրերով:

Ականատես

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

### ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Մերվ, 15 ապրիլի

Շանտաժը մեզանում քանի գնում մեծ ծաւալներ է ստանում: Այժմ երևան են եկել նոր ձևի շանտաժիստներ, որոնք ժողովրդից դրամ են կորզում, ոչ թէ «բուկի վվերխ»-ի և սպառնական նամակների միջոցով, այլ բարեգործական դիմակի տակ: Ահա մի նմուշ այդպիսի էքսպրօպրիացիայի, որ տեղի է ունեցել Մերվում երկու շաբաթ առաջ:

Մի քանի անձնաւորութիւններ մի թուղթ ձեռներին ման են գալիս խանութէ-խանութ և փող ժողովում. Թղթի մէջ ասված է, որ փողը ժողովվում է մի աղքատ շամախեցի կնոջ համար, որը սաստիկ հիւանդ է և չքաւորութեան մէջ է, ուզում են հայրենիք ուղարկել: Մի քանի տեղ էլ առանց թղթի են դիմել. այս անգամ արդէն ոչ թէ շամախեցի հիւանդ կնոջ համար, այլ ղարաբաղցի հիւանդ մի երիտասարդի համար:

Ահա այսպիսի մի քանի նպատակների տակ յիշեալ անձինք ժողովելով մի որոշ գումար՝ գնում են հիւրանոց-գարեջրատուն, քէֆ սարքում և վատնում բարեգործական նպատակի համար ժողոված փողերը:

Դէպքից մի քանի օր յետոյ պարզվում է, որ Մերվում ոչ մի աղքատ կամ հիւանդ շամախեցի կին չէ եղել և ոչ ղարաբաղցի աղքատ երիտասարդ, այլ յիշեալ 3—4 պարոնների գլխում ֆանտազիա է ծագել մի այդպիսի խաղ խաղալու:

Եւ այս բոլորը կատարվում է մեր հասարակութեան քթի տակ, որը թողնում է անուշադիր: Իսկ երբ ես դիմեցի դէպքը պատմող պարոնին հարցով «Ինչու յետոյ չը պահանջեցին փող հաւաքող անձնաւորութիւններից՝ թէ ինչ արին ժողոված փողը», պարոնը իմ հարցիս տուեց հետևեալ պատասխանը. «Բան չունենք. մեզանից թոշ և ծվ չէ տարել. մենք չը կարողացանք հաշւի պահանջել հազարների համար՝ թէ ինչ արին, ուր մնաց թէ պահանջէինք 20-ական կոպէկների համար»: Դէպքերը շարունակվում են, իսկ «Մշակի» այս տարվայ № 3-ում, իմ թղթակցութեան մէջ, յիշված գաւառապետի դիմումի համաձայն, հայերից ընտրված 8 անդամներից բաղկացած կօմիտէի գործունէութիւնը ոչ մի հետևանք չունեցաւ: Մենք միայն նրանց ընտրութիւնը տեսանք, իսկ գործունէութիւնը չը տեսանք:

Մանասէ

—

Գանձակ, 27 ապրիլի

Այսօր պատարագից յետոյ ս. Յովհաննէս եկեղեցու բակում կայացաւ նոյն եկեղեցու ծխ. ժողովը: Ծխ. ժողովը ընտրեց երկու ներկայացուցիչ կաթող. պատգամ. ընտրութեանը մասնակցելու համար: Միաձայն ընտրվեցին բժշկապ. Գրիգոր Տէր-Գրիգորեան և աստիճանաւոր Լևոն (Յովսէփ) Խօջայեան: Ներկայ եղողներից մէկը վերջինիս ընտրութիւնը հաշւեց անկանօն, որովհետև նա Նորաշէն թաղի ծուխ է: Բայց ժողովըրդը, ի նկատի ունենալով թեկնածուի արժանաւորութիւնը, իր վստահութեան քուէն տուաւ նրան: Վիճաբանութեան տեղիք տուեցին սինօդի և Թեմիս առաջնորդի հակասող հրամանները: Սինօդը, համաձայն կանօնադրութեան, հրամայում է, որ իւրաքանչիւր եկեղեցու ծուխ երեքական պատուիրակներ ընտրէ. Թեմական առաջնորդը պատուիրակների թիւը սահմանափակում է երկուսով: Ժողովականները, ինչպէս ներկայ եղող հոգևոր կառավարութեան ներկայացուցիչ քահանաները, յայտնեցին, որ իրանք պարտաւոր են ենթարկվել մերձաւոր իշխանաւորի անմիջական կարգադրութեան:

Այդ ժողովում պիտի ընտրէին մի հոգաբարձու՝ հրաժարված բժ. Տէր-Գրիգորեանի փոխարէն: Ժողովականները աւելորդ համարեցին մի քանի ամսվայ համար ընտրել նոր հոգաբարձու և աւելի յարմար համարեցին այդ ընտրութիւնը յետաձգել մինչև յունվար, միացնել հոգաբարձութեանց ընտրութեան օրը: Նոյն ժողովում պիտի քննվէր ս. Յովհաննէս եկեղ. երեցփոխ Ալէզեանի և հոգաբարձութեան կազմած 1908 թ. նախահաշիւը, որը առիթ տուաւ գործին չը վերաբերող հակաճառութեանց, և ուշ լինելու պատճառով ժողովականները ցրվեցին, քննութիւնը թողնելով առաջիկայ կիրակի օրվան:

Սագան

## ԷԺԱՆԱԳԻՆ ՃԱՇԱՐԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

—

Ապրիլի 27-ին, առաւօտեան ժամը 12-ին, իր սեփական շինութեան մէջ կայացաւ էժանագին և ձրի ճաշարան-թէյարանի ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը, որին ներկայ էին 39 անդամներ: Ընկերութեան նախագահ տիկին Հ. Ա. Աւեթանդեան, բանալով նիստը, խնդրեց ժողովականներին այդ օրվայ նիստը կառավարելու համար ընտրել նախագահ և մի քարտուղար: Ընտրվեցին նախագահ պ. Ա. Քիշմիշեան և քարտուղար պ. Դ. Եմինեան: Այնուհետև կարդացվեց նախկին ընդհանուր ժողովի արձանագրութիւնը և հաստատվեց: Նոյնպէս կարդացվում և հաստատվում են 1) անցեալ տարվայ հաշիւը, 2) շինութեան վերաբերեալ զեկուցումը և 3) 1908 թւականի նախահաշիւը:

Նոր կառուցված շինութեան վերաբերեալ զեկուցումից երևաց, որ ըստ նախահաշւի

շինութիւնը կառուցանելու համար որոշված է եղել 12,000 ռուբլի, իսկ ծախսվել է 9000 ռուբլի: Վերոյիշեալ շինութեան կառուցման գործում իրանց սիրայօժար և ձրի ծառայութիւնն են ցոյց տուել ինժեներներ պ.պ. Մ. Յովհաննիսեան, Կ. Մարգարեան, Ի. Պօնտօյեան և Ս. Զօհրաբեան, որոնց և ընդհանուր ժողովը որոշեց շնորհակալութիւն յայտնել:

Նախահաշիւը քննելիս պ. Գ. Կաֆեանը առաջարկեց ընկերութեան միջոցները աւելացնելու համար ընկերութեան անդամավճարը բարձրացնել մինչև 10 ռուբլու, սակայն ժողովը միանում է պ. Ա. Քիշմիշեանի կարծիքին, որը առաջարկում է դրա փոխարէն աշխատել աւելացնել անդամների թիւը:

Սոյն 1908 թւի համար ծախք է նշանակված 6700 ռուբլի:

Անցեալ 1907 թւի ընկերութեան գործունէութեան մէջ, ի միջի այլոց, աչքի է ընկնում սեփական շինութեան կառուցումը, որը բաղկացած է 3 բաւական ընդարձակ և մաքուր սենեակներից, մի խոհանոցից, մի պահեստից և փոից: Ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ սենեակներից մէկը յատկացված է ընթերցարանի համար. դա միանգամայն պատիւ է բերում ընկերութեան: Շինութիւնը կառուցանելու համար զանազան անձերից դրամով նուէրներ են ստացվել 2272 ռուբլի, իսկ նիւթեղէններով 842 ր. 69 կ.: Ընդհանուր ժողովին ներկայացված անցեալ տարվայ հաշւի մէջ մենք նկատեցինք մի քանի վիճակագրական թւերի և տեղեկութիւնների բացակայութիւն, որոնք, մեր կարծիքով, անհրաժեշտ են հասարակութեան համար. այդպէս, օրինակ, յայտնի չեն թէ որքան հոգի են օգտվել ճաշարանից և քանի անգամ, ինչ ազգութիւններից են եղել դրանք և ք՞անի հոգի իւրաքանչիւրից կամ ինչ տոկոս է կազմում իւրաքանչիւր ազգութիւն և այլն: Այդ ժողովում կատարվեցին պաշտօնական անձանց ընտրութիւններ. գաղտնի քուէարկութեամբ ժամանակաւոր անդամներ ընտրվեցին տիկիններ Ե. Սափարեան, Ա. Մելիք-Բէգլարեան և Ե. Իգմիրեան, իսկ փոխանդամներ նրանց՝ տիկիններ Կօզնօվիցկայա, Ա. Իստամանեան, Ե. Տէր-Մինասեան, Ե. Լազարեան, Տ. Ամբարդանեան, Մ. Բօզարջեան և Մ. Շահիկեան. վերստուգող յանձնաժողովի անդամներ ընտրվեցին պ. պ. Ա. Միլօվ, Ս. Կաֆեան, Մ. Ցուրինեան և Ս. Մանուէլեան:

Ժողովը իր շնորհակալութիւնը յայտնելով վարչութեան նրա եռանդուն գործունէութեան համար, իսկ նորերին ցանկանալով եռանդ. գործելու՝ ցրվեց ժամը 2-ին:

## ՄԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

—

Բագու, 24 ապրիլի

Բագուն, ինչպէս ահեղի մի խոշոր սպունգ, իր մէջ ծծում է ջրի նման գաւառների բոլոր թարմ, երիտասարդ ոյժերը, լինեն նրանք ինտելիգենտ թէ հասարակ բանւոր ձեռքեր, և իր ծակոտիների մէջ անհետացնելով, գաւառի համար անպէտքացնում է այդ բոլորը:

Դրանով պէտք է բացատրել գաւառներում կեանքի կանգ առնելը, կատարեալ ամայութիւնը. ուրիշ կերպ էլ չէր կարող լինել, որովհետև ծերունի մնացորդները գաւառներում անընդունակ են եռանդուն գործունէութեան, անկարող են կուլտուրա ստեղծել, նրանք կեանքի արժէւորքի չէքումն են կանգնած:

Ի՞նչն է քաշում այդ երիտասարդներին դէպի Բագու, որտեղ մարդկային օրգանիզմի համար ոչ առողջ օդ կայ և ոչ էլ առողջ ջուր:

Գաւառը ննջացել, սեղմվել է ազգաբնակութեան աճումով, մարդիկ այլևս անկարող են ապրել տեղական նկամուտով. հողը սակաւ է, այդ կը վկայեն բոլորը:

Մարդկանց ստեղծած ներկայ կեանքի անչափ աւելորդ պահանջներն էլ մի կատարեալ չարիք է դարձել, որին բաւարարութիւն տալը կատարեալ պատիժ է:

Ահա գլխաւոր պատճառներից մէկը, որ ամայացնում է գաւառները եռուն գործունէութեան ծարաւի երիտասարդ, թարմ ոյժերից:

Որքան էլ մեր ակնարկած պատճառները զուտ ճշմարտութիւն են, դարձեալ գաւառները դեռ երկար ժամանակ ընդունակ կը լինեն բազմաթիւ մարդիկ սնուցանելու, կերակրելու, եթէ միայն գաւառներում լինէին գիտութեամբ զինված, ստեղծագործող ձեռներէցութեան ընդունակ ոյժեր: Մի օտարազգի ինձ ասում էր՝ «Ոսկին Երևանի նահանգի դաշտերում հոսում է, բայց ժողովող չը կայ»: Եւ դա զուտ ճշմարտութիւն է: Գաւառներում ոսկին ժողովող չը կայ, այլ այնտեղ կայ միայն հայկական քէն, նախանձ, իսկ համերաշխութեամբ և ընկերակցական հասկացողութեամբ գործ կատարելը միանգամայն բացակայում է:

Մենք շնորհաւորել միայն կարող ենք այն ձեռնարկութիւնը, որ Բագուի մի խումբ կապիտալիստներ ընկերութիւն են կազմում Էջմիածնի և մի քանի ուրիշ գիւղերի անջրդի հողերը ոռոգելու և շահագործելու նպատակով: Դա մի խելացի և շահի հետ միացած բարեգործութիւն է, որ կապիտալը ձեռք է մեկնում քայքայվող գաւառին, որը միջոց կը տայ գաւառացուն ապրել իր մայր հողի վրա և չոչնչանալ Բագուի ընչազուրկ ու աննպատակ կեանքի հիւծարանների մէջ, ուր ցոփութեան, զեղխութեան և անբարոյականութեան ահեղի ծովի անդունդի մէջ ընկղմված, թաղված է ամեն բան:

Լսում ենք, որ այդ ընկերութիւնը առ այժմ չէ սկսելու գործել պատերազմի մասին տարածված շշուկների պատճառով:

Այդ մենք գտնում ենք միանգամայն անտեղի, որովհետև՝ եթէ պատերազմը անաջող հետևանքներ ունենայ, դրա ահեղի հարւածը նախ և առաջ իջնելու է հէնց Բագուի և այդտեղի հայ կապիտալիստների գլխին: Դարձեալ կրկնում եմ, որ պատերազմի անյաջողութեան դէպքում տուժելու է ամբողջ Կովկասի հայութիւնը հէնց Բագուից սկսած... Եւ եթէ Կովկասում հայութիւնը կորցնելու է ամեն բան, թող ուրեմն կորչի և նրա հետ միասին մի հարիւր հազարանոց ձեռնարկութիւն Էջմիածնի համար:

Բայց որովհետև սուլթան Համիդի այդ ժոռորումները դեռ ևս երկար ժամանակ իրականանալու գործ չէ, թէպէտ դրա համար նա իր ոսկիները 1888 թւից անխնայ շռայլում է Կովկասում և նոյնիսկ Տուլայում, բայց և այնպէս դրա հանդէպ մենք չը պէտք է ձեռքներս ծալած նստենք. ուրուականներից երկնչելով, չը պէտք է մեր կուլտուրական ստեղծագործութիւնը դադարեցնենք:

Ընդհակառակը աւելի քան պէտք է մենք բուռն գործունէութեան մէջ լինենք, ստեղծագործող լինենք, որովհետև այս անգամ համակովկասեան պատերազմի ելքից է կախված մեր «լինել չը լինելու» խնդիրը:

Խնդիրն այնքան պարզ է, որ անտարբեր, ապուշ նայուածքը յանցագործութիւն է: Մենք մասնաւորապէս չենք զլանայ մեր իմացածով օգտակար լինել յիշեալ ընկերութեանը:

Յովհ. Խօջաէյնաթեան

## ԹՈՒՐՔԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐԸ ՆՈՒԽՈՒՄ

—

Նուխի, 20 ապրիլի

Ժողովրդական կրթութիւնը մեզ մօտ ամենացածր աստիճանի վրա է գտնվում:

Քաղաքային վեցդասեան դպրոցը, հայկական ծխական երկսեռ և թուրքաց դարձեալ երկսեռ ուսումնարանները, ահա այն միակ աղբիւրները, որոնք երեսուն հազար բնակիչ ունեցող քաղաքին կրթութիւն են մատակարարում:

Կովկասեան միջնակարգ ուսումնարաններում Նուխին ունի բաւականաչափ սովորողներ, բայց սրանք բոլորը ունևոր դասից են:

Իսկ ժողովրդի մեծամասնութեան համար իրանց զաւակներին օտար քաղաք ուղարկելը միանգամից անմատչելի է:

Արհեստաւոր և միջին դասի համար դարձեալ կարելի կը լինէր մի կերպ երեխային իր մօտ պահելով միջնակարգ դպրոցի ուսման թօշակը և պիտոյքները հայթայթել և այդպիսով երեխային ուսում տալ, եթէ միայն այդպիսի դպրոցներ մեզ մօտ գոյութիւն ունենային:

Բայց այդ մասին մտածող չը կայ: Քաղաքային վարչութիւնը կազմված լինելով առանց բացառութեան վաճառական դասից, շատ գոհ է և նրանով, որ իր դասակարգի որդիքը միջնակարգ և բարձրագոյն դպրոցներում են սովորում և կարող են այդպիսով զարկ տալ իրանց վաճառականական և արդիւնաբերական գործին:

Քաղաքային վարչութեան մի քանի անհոգութիւնը նկատելով, բանիմաց մարդիկ, որոնց համար թանգ է ժողովրդի բարօրութիւնը, ամեն ջանք աշխատում են զարկ տալ ժողովրդի կրթական գործին:

Քաղաքային դպրոցի տեսչի և մի քանի թուրք անձնաւորութիւնների ջանքերով քաղաքի երեք մասում բացված են գործարանական բանւորների համար երեկոյեան դասընթացքներ, ուր աւանդվում են ռուսաց լեզու, թւաբանութիւն՝ ռուսաց լեզւով, մայրենի լեզու:

Երկրորդ ամիսն է, ինչ գոյութիւն ունեն այդ դասընթացքները:

Պէտք է տեսնել թէ ինչպիսի աշխոյժով են անցնում դասերը, թէ ինչպէս այս կարճ ժամանակվայ ընթացքում աշակերտները կարողանում են ռուսերէնը ազատ թարգմանել մայրենի լեզւով, թէ ինչպէս նրանք կարողանում են շուտափոյթ, առանց կանգ առնելու պատասխանել տուած հարցերին:

Յաճախողները բաւականաչափ են: Այստեղ նստարանի վրա նստած կարելի է տեսնել 70 տարեկան ծերից մինչև 14 տարեկան պատանին, մի բան, որը թուրքաց նահապետական կեանքում տեսնված բան չէ: Իսկ այսօր կապիտալիստական-արդիւնաբերական շրջանը բերում միացնում է բանւորներին մի ընտանիքի մէջ:

Դասընթացքները պահվում են իրանց բանւորների տուած ամսական 1-ական ռուբլի թօշակով:

Մեզ հայերիս մնում է ցանկանալ մեր հարևան թուրքերին աջողութիւն և առաջադիմութիւն իրանց գործում ու այս դէպքում հետևել, առանց ժամանակ կորցնելու, մեր հարևանի օրինակին:

Vitos

## ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

—

— Հոկտեմբերեանների շրջանում աշխուժով քննվում է այն հարցը, թէ ինչպէս վերաբերվեն արդարադատութեան մինիստրի առաջարկին՝ պատգամաւոր Կօլիւբակինին Պետական Դումայի կազմից հեռացնելու մասին: Ֆրակցիայի ճնշող մեծամասնութիւնը այն միտքն է յայտնում, որ պէտք է պաշտպանել մինիստրի առաջարկը: Ֆրակցիայի անդամներից մի քանիսը սակայն առաջարկում են միաժամանակ առանձին որոշումով ցաւակցութիւն յայտնել, որ Պետական Դուման զրկվում է մի այդպիսի օգտակար աշխատաւորից: Վերջին առաջարկը այնուամենայնիւ առարկութեան է հանդիպել ձախակողմեան բնաւորութեամբ և, ամենայն հաւանականութեամբ, կը մերժվի ֆրակցիայի կողմից: Հոկտեմբերեանների ֆրակցիայից մի քանի անդամներ միայն և ի միջի այլոց Դումայի նախագահի օգնական բարոն Մէյենդօրֆը ասում են, որ Դուման չը պէտք է հեռացնէ իր կազմից Կօլիւբակինին: («Р. В.»)

— Պետական Դումայից հեռացված պատգամաւոր Կօլիւբակինի փոխարէն կադետները դնում են Կուտլէրի թեկնածութիւնը, իսկ հոկտեմբերեանները՝ Իւբեյ Միլիւտինին:

— Դումայի բոլոր կուսակցութիւնների շրջաններում քննվում է վերջին հեղեղումներից վնասվածներին օգնութիւն տալու հարցը: Այդ նպատակի համար մօտաւորապէս անհրաժեշտ է 2 միլիօն ռուբլի: Հարցը մօտ ժամանակներս քննութեան կառնի Պետական Դուման:

— Հոկտեմբերեանները դժգոհ են Դումայի նիստում բիւջէի քննութեան ժամանակ Կոկօվցեվի արտասանած այն խօսքից՝ թէ «փառք Աստուծոյ, մեզանում պարլամենտ չը կայ»: Ասում են, որ այդ խօսքերը ուղղված են Ստոլիպինի դէմ: Ֆրակցիայի աղմկայոյզ նիստում վճռված է պահանջել, որպէսզի օրէնսդրական կարգով անկետային մասնաժողով կազմվի: («Б.»)

## ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

—

Ապրիլի 26-ին կովկասեան զինւորական նահանգական դատարանում քննվեց Կադմաշվիլու և Դարչիաշվիլու գործը, որոնք մեղադրվում են Սղնախ քաղաքի գեղագործ Մուսուլօվի սպանութեան մէջ: Դատարանը Կադմաշվիլուն մեղաւոր ճանաչեց և դատապարտեց մահվան պատժի կախաղանի միջոցով, իսկ Դարչիաշվիլուն արդարացրեց:

—

Ապրիլի 28-ին կովկասեան զինւորական նահանգական դատարանը քննեց Մուսա Լիփալա-օղլու գործը, որ մեղադրվում էր Զաքաթալայից 7 վերստ հեռաւորութեան վրա վաճառական Յակոբեանին կողոպտելու մէջ: Դատարանը Լիփալա-օղլուն դատապարտեց մահվան պատժի կախաղանով, փոխարինելով այդ պատիժը մի տարի բանտարկութեամբ:

—

Կովկասեան զինւորական-նահանգական դատարանին է յանձնված Գանձակի գաւառի Բադա գիւղի բնակիչ Յարութիւն Խաչատրեանը, որ մեղադրվում է Գանձակի գաւառապետ Աւալիանուն կանխամտածված կերպով սպանելու մէջ:

## ԼԷՕԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԵԱՆ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

—

Չը գրեմ, թէ պ. Լէօի վերջին դասախօսութիւնը «Գլխաւոր հոսանքները հայոց գրականութեան պատմութեան մէջ» վերնագրով ունկնդիրներից ում և ինչպէս չը գոհացրեց, բայց ինձ համար գոնէ այդ դասախօսութիւնը նման էր մի՝ պատուանդանից միանգամայն զուրկ արձանի, որին չը գիտես թէ ինչպէս կանգնեցնես, որպէսզի չընկնի ու չը խորտակվի: Պատմաբանը, որը չէ կամենում, հեքիաթ ասողի նման, բաւականանալ միմիայն դէպքերի ու անցքերի յաջորդական նկարագրութիւնով, այլ և կամենում է նրանց բացատրութիւնները տալ ու նրանց առաջացնող պատճառները խորքը թափանցել ու մեկնաբանել, պէտք է անշուշտ մի որոշ փիլիսոփայական աշխարհահայեացք, մեկնման կէտ ունենայ, որպէսզի կարելի լինի պատմական բոլոր անցքերը մի որոշ յայտարարի վերածել և այդպիսով ընթերցողների կամ ունկնդիրների համար պարզ ու յստակ դարձնել այն բոլորը, ինչ առաջին երևոյթից չափազանց խառն ու անկանոն թափթփված են երևում: Առանց դրան պատմութիւնը դառնում է մի հեքիաթ, որը ընթերցողին կամ ունկնդիրներին միմիայն քնեցնել կարող է:

Ցաւում ենք ասելու, որ պ. Լէօի վերջին դասախօսութիւնը հէնց այդ կարգի մի պատմութիւն էր, որ և չը կարողացաւ հետաքրքրել ունկնդիրներին:

Դասախօսութեան սկզբում պ. Լէօն շատ ճիշտ կերպով նկատեց, որ ոչ մի ազգի գրականութիւն չէ կարող զերծ լինել օտար ազդեցութիւններից, բայց ամեն մի գրականութիւն, ազդվելով օտարից, փոխ առնելով այս կամ այն միտքը, հոսանքը և ուղղութիւնը, նրան իւրացնում, մշակում և իր կեանքի պայմաններին է յարմարեցնում: Եւ դա շատ բնական է,—ասաց յարգելի դասախօսը,—որովհետև ամեն մի ազգի գրականութիւն նրա կեանքի արտացոլումն է:

Այս անժխտելի ճշմարտութիւնը լսելուց յետոյ, անշուշտ ամեն մարդ սպասում էր պ. Լէօից լսելու, թէ ինչպիսի մտքեր, գաղափարական հոսանքներ և գրականական ուղղութիւններ են հայերը փոխ վերցրել իրանց մօտիկ ու հեռաւոր հարևաններից, ինչպէս են նրանք իրանց փոխ վերցրածները մշակել, իրանց կեանքի պայմաններին յարմարեցրել ու իւրացրել. հետևապէս սպասելի էր լսել, թէ ինչպիսի կեանքի պայմաններ են ունեցել հայերը այս կամ այն պատմական շրջանում, որոնց համաձայն էլ մշակվել են օտարից փոխ վերցված գրական հոսանքները:

Պ. Լէօն նամանաւանդ հետաքրքրեց իր ունկնդիրներին նրանով, որ դասախօսութեան հէնց սկզբում յայտնեց, որ այն բոլորը, ինչ որ ինքը պիտի տայ, իր սեփական ուսումների արդիւնքն են և եզրակացութիւններն էլ իր սեփականն են:

«Կը նշանակէ, նորութիւններ շատ պիտի լսենք» մտածեցի, և լարված ուշադրութեամբ սկսեցի դասախօսութեանը հետևել: Սակայն, որչափ առաջ գնաց պ. Լէօն իր դասախօսութեան մէջ, այնչափ աւելի ու աւելի հին ու հին և շատ անգամներ կրկնված բաներ աւանդեց մեզ նա: Պարսկական ազդեցութեանը յաջորդում է բիւզանդականը, բիւզանդականին— արաբականը, իսկ սրան էլ լատինականը և այսպէս անվերջ... մի կատարեալ հեքիաթ:

Պ. Լէօն շատ շուտով մոռացաւ դասախօսութեան սկզբում իր բերած այն թեօրիան, որի մասին մենք յիշեցինք վերևում, և նա գէթ մի հատիկ օրինակ չը տուեց, թէ հայերը իրանց 15 դարերի գրականական կեանքում ինչ միտք կամ գաղափար փոխ առան իրանց հարևաններից և ինչպէս կամ ինչ ձևով մշակեցին ու յարմարեցրին իրանց կեանքի այս կամ այն պայմաններին: Նոյնիսկ նա չը բացատրեց անգամ թէ այս կամ այն գաղափարը կամ գրականական հոսանքը այս կամ այն երկրում ինչպէս, ինչ ձևով և ինչպիսի պայմանների մէջ է ծնունդ առել, զարգացել և ինչպիսի հանգամանքների մէջ է նա տարածվել ու ապա մի այլ՝ նոր հոսանքի տեղի տուել: Պ. Լէօի պատմութիւնից կարելի է այն հաստատ համոզմանը գալ, որ գաղափարներն ու գրականական հոսանքները թափվում են երկնքից և կամ քամին է նրանց բերում ու քշում տանում...

Եւ դա կոչվում է պատմութիւն...

Խ.-Ազատ

## ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Երկուշաբթի երեկոյեան, ապրիլի 28-ին, Թիֆլիսի արքունական թատրօնում, ռուսաց դրամատիկ խումբը ներկայացրեց Պոտապենկոյի «Նոր կեանք» անունով 4 գործ. պիէսը:

Պիէսի գլխաւոր հերոսը՝ ծերունի Րատոբորցեվը, տոգորված մէջտ «Նորը ստեղծագործելու», միահամուռ ջանքերով աշխատելու յօգուտ ընդհանուրի բարօրութեան, և իբրև գլխաւոր գործօն՝ գրականութեան, լրագրութեան ժողովրդականացումը և տարածումը համարելով,—բանում է տպարան, ուր, գործի սկզբում, բանւորական ծանր պաշտօնը ստանձնում են. Րատոբորցեվի

## Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

### «W» («Վ») ՀՆՉԻՒՆԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԵՐԷՆԻ ՄԷՋ

(Ապրիլի 17-ի ուսուցչական միութեան ժողովում խօսված դասախօսութեան բովանդակութիւնը)

—

Հայերէն աւանդական ուղղագրութեամբ «W» հնչիւնը արտայայտվում է երեք կերպով.

1) «Վ» գրով՝ բառերի սկզբում (բացի ո-ից առաջ), և բառերի վերջում՝ ո-ից յետոյ. օր. վարդ, վտանգ, ծով, խօսքով:

2) «Ւ» գրով՝ ձայնաւորներից յետոյ, բացի ո-ից, և բառերի վերջերում՝ բաց վանկերում, օր. աւետիս, հիւանդ, Եւրոպա, թիւ, հաւ:

3) «Ու» գրախմբով՝ բաղաձայնից յետոյ՝ ձայնաւորից առաջ. օր. յօդուած, լեզուի:

Որովհետև «ւ» և «ու» ուրիշ դէպքերում ձայնաւոր հնչիւն ունեն՝ ուստի հին ժամանակ, ձեռագիրներում և հին տպագրութիւնների մէջ, նրանց ձայնաւոր թէ բաղաձայն լինելը որոշելու համար՝ բաղաձայն եղած դէպքում «ւ»-ի վրա դնում էին թաւ նշան *), իսկ ձայնաւոր եղած դէպքում կամ սուղ նշան (օ) կամ ոչինչ. այսպէս աւր (=օր), ժուր. առւօտ (=առավօտ) թիւ, թիւր. մեղուի, Աստուծ: Սակայն այս նշանները կամաց կամաց գործածութիւնից դուրս եկան, և «ու» գրութիւնը իբրև ձայնաւոր կամ բաղաձայն կարդալը մնաց վարժութեան:

Սակայն վերջին երկու տասնամեակներում մի նոր ուղղագրական սիստեմ առաջ եկաւ՝ ու=W գրութեան վերաբերմամբ: Ոմանք մեր հեղինակներից, նկատելով մի կողմից, որ «ու» երբեմն ձայնաւոր է հնչվում (ինչպէս ռուսերէն у), երբեմն բաղաձայն (W), և միւս կողմից, որ «յաւիտեան, բաւական, հաւ, թիւ» և այլն բառերի մէջ «ւ»-ը W-ի ձայն ունի՝ յարմար համարեցին «ու» գրութիւնը բոլոր այն դէպքերում, երբ «W»-ի հնչիւն ունի՝ ազելով գրել «ւ», որով նախ՝ «ու» գրութիւնը միայն ձայնաւոր հնչիւնի համար կը պահվի և թիւրիմացութիւնից կը խուսափվի, և երկրորդ՝ գրութեան սիստեմի հեշտութիւն կը լինի՝ մի աւելորդ գիր (ո) դուրս ձգելով: Այս կերպով սկսեցին գրել—լեզւ-լեզւի, Բագու-Բագւայ, թիւ-թւի, գրվել, գրվում և այլն: Ուրեմն այս գրութեան հետևողները աւանդական «W»-ի ուղղագրութեան 3-րդ կերպը վերացրին, փոխարինելով նրան երկրորդ կերպով: Այս սիստեմի պաշտպանները, գլխաւորապէս Ղ. Աղայեան և վերջին տարիներս Ն. Ադոնց, որոնք առանձին բրօշիւրներ ու յօդուածներ նուիրեցին այս հարցին՝ իբրև հիմք ընդունում են այն տեսակէտը, թէ «ւ» բաղաձայն գիր է, ուստի և նրան կոչում են ոչ թէ ւիւն, այլ «փոքր ւ» (փոքր վ):

Հակառակ կարծիք ունէր «ւ»-ի մասին հանգուցեալ Ս. Սարգսեանը («Ագուլեցոց բարբառի» հեղինակը), որ ընդարձակ յօդուածում ապացուցանելով թէ «ւ»-ը ձայնաւոր է՝ սխալ էր համարում Ղ. Աղայեանի մտցրած սիստեմը ւ=փոքր վ, և առաջարկում էր «W» հնչիւնը արտայայտելու համար ոչ թէ գործածել երբեմն «վ» և երբեմն «ւ» ըստ Աղայեանի, այլ միայն «վ» բոլոր դէպքերումն էլ:

Ս. Սարգսեանի գիտական և լուրջ առաջարկութիւնը արձագանգ չը գտաւ, և «ւ»=վ գրութիւնը սկսեց աւելի և աւելի արծարծվել շնորհիւ Ղ. Աղայեանի գեղեցիկ դասագրքերի և շնորհիւ այն առերևոյթ հեշտութեան ու միօրինակութեան, որ այդ գրութիւնը մտցնում էր մեր ուղղագրութեան մէջ:

Սակայն այս գրութիւնը նորանոր դժուարութիւնների և չարիքների պատճառ է դառնում, ուստի ես յանձն առայ, ուսուցչական միութեան վարչութեան հրաւէրով, լուսաբանել այս խնդիրը՝ որքան ձեռնհաս եմ:

Տարօրինակ թող չը թուի՝ եթէ ասեմ, թէ այս հարցը չէ պատկանում լոկ հայոց լեզուին և ուղղագրութեանը, այլ բոլոր լեզուներին, և այնքան հին է՝ որքան առհասարակ լեզուները: Ուստի բնական է, այս հարցը հայերէնի մէջ լուծելու ժամանակ, ուշադրութեան առնել, թէ ինչպէս են նրան լուծել ուրիշ ազգեր ու գրականութիւններ:

Նախ և առաջ անհրաժեշտ է որոշ հասկացողութիւն կազմել, թէ սկզբնապէս ինչ տառ է «ւ»-ը և ինչից է առաջ գալիս նրա երկդիմի՝ երբեմն ձայնաւոր երբեմն բաղաձայն հնչիւնը:

Բազմաթիւ անուրանալի փաստեր ապացուցանում են, որ «ւ» սկզբնապէս եղել է ձայնաւոր տառ և հնչիւնով համապատասխան յունարէնի ւիփսիլօնին (ֆրանսերէն u):

Մեր հին հեղինակները վկայում են, թէ ս. Մեսրոպ հայերէն գրերը դասաւորեց յունական այբուբենի կարգով: Եւ յիրաւի, երբ կարգով գրում ենք մեր գրերը—ա, բ, գ, դ... տ, ր, ց, ւ, փ, ք, և նրանց տակ դարձեալ կարգով գրում ենք յունական այբուբենի գրերը (ալֆա, բէտա, գամմա, դէլտա... տաու, —, —, իւփսիլօն, ֆի, խի), տեսնում ենք, որ հայերէն «ւ»-ը զուգադիպում է իւփսիլօնին: Իսկ իւփսիլօնը (υ նուրբ) անտարակոյս ձայնաւոր տառ է: «Կիւրիակէ» (հայացած ձևով կիւրակէ=տէրունական) բառում կ-ի և ր-ի մէջ գործ է ածվում իւփսիլօն և կարդացվում է կիւրիակէ (ֆրանս. kuriakê) և ոչ թէ կվրակէ, և այսպիսի հազարաւոր օրինակներ: Իսկ եթէ իւփսիլօնը ձայնաւոր է՝ ուրեմն ձայնաւոր է և նրան համապատասխանող հայերէն «ւ»-ը:

Ինչպէս յունարէնում իւփսիլօնը ուրիշ ձայնաւորների հետ կազմում է երկբարբառներ՝ նոյնպէս և հայերէնում միևնոյն ձայնաւորների հետ միևնոյն երկբարբառներն է կազմում «ւ»-ը. օր. յուն. oy=հայ ու=ֆրանս. ou. յուն. ay=հայ աւ,—ֆրանս. au. յուն. ey=հայ. եւ—ֆրանս. eu:

Այս գրի անունը ւիւն, որ մենք արտասանում ենք թեթև հագագով ինչպէս հիւն՝ ձայնաւոր տառի արտասանութիւն ունի (ֆրանս. ûne), և ոչ բաղաձայնի՝ ինչպէս վիւն: Ներսէս Շնորհալին այբուբենի գրերի կարգով սկսվող տաղաչափութիւններում մէջ՝ «ւ» գրով տողը սկսելու համար գրել է «ււրաքանչիւրոց ւրեմամբ խուան ատից ւրեմբեալ է հոգիս», ուրեմն նա «ւ»-ը արտասանելիս է եղել ինչպէս ֆրանսերէն u, hu, բայց ոչ ինչպէս վ:

Մեր հին հեղինակները վկայում են, որ ս. Մեսրոպի այբուբենը ունէր 7 ձայնաւոր, արդ քանի որ ս. Մեսրոպի այբուբենում օ ձայնաւորը չը կար՝ ուրեմն ձայնաւորները մնում էին ա, ե, է, ը, ի, ո, ւ, ուրեմն և ւ ձայնաւոր է եղել:

Ձեռագիրների մէջ երբեմն երբեմն պատահում են հետաքրքրական գրութիւններ— «Հւսիս» կամ «Հւսւս», «կւրակէ», «հւղէ», «Եգւպտոս», «Հւփիփեն», «Անտւքոս», «Բաբւլոն» և այլն, որոնց մէջ «ւ» անպայման ձայնաւորի հնչիւն ունի նման յու-

*) Տպարանում թաւ նշանի գիր չը լինելու պատճառով՝ գործ ենք ածում երկար (՛):

…ընտանիքի համարեա բոլոր անդամները, …թեամբ ծերունու մի աղջկայ և բացառութ…, իսկ մի տարուց յետոյ գործը ա-փոխայի, ընդարձակելով, մի խոշոր լրագրի …ելի հրատարակութիւնը ձեռնարկած ունենալով, …վարձվում են բանուորներ։ Յօդացաւով տանջվող ծերունի Բատօբօրցեվը մինչև վերջ, նոյնիսկ մահվան րօպէին, մտածում է ընդհանուրի, նամանաւանդ չունևորների բարօրութեան և մտաւորի համար, և պատուիրում է իւրայիններին ձեռնարկել հրատարակելու՝ հարուստների հաշւով՝ ձրի թերթ չունևորների շրջանում տարածելու համար, որպէսզի չունևոր դասակարգն էլ կարող լինի օգտվել մարդկային մտքի «նոր ստեղծագործութիւններից»։

Բատօբօրցեվի խոշոր և պատասխանատու դերի մէջ Լևվիցօվ հիանալի էր. ինչպէս նկատվում էր, շնորհալի դերասանը բաւականին ուսումնասիրած ունէր այդ դերը։

Միւս դերակատարները՝ Սօկօլօվսկայա, Բերինևա, Մօժանսկայա, Նօվիկօվա, Բօուր, Միխալին։ Շէնդանօվսկին վատ չէին և ընդհանրապէս նպաստեցին անսամբլի աջողութեանը։ X.

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Ֆինանսների մինիստրը Կովկասի Փոխարքայի միջնորդութեան համաձայն թոյլատրել է պետական գանձարանից հըրկին 13,900 րուբլի տալ Նուխի քաղաքին՝ Կօջանչայ գետի ափերը ամրացնելու համար. Նաև 14,000 րուբլի բաց թողնել Նուխի-Եւլախ խճուղին Կօջանչայ գետի վարարումից պաշտպանելու համար։

◆ Կովկասեան թանգարանի վերատեսուչ Կազնակօվը և Կայսր Ալէքսանդր III-ի թանգարանի ազգագրագէտ Միլլեր մեկնել են Ղուբա ազգագրութեան վերաբերեալ նիւթեր ժողովելու համար։ Նրանք այդ նպատակով մտադիր են այցելել Բագուի նահանգի Շամախու և Ղուբայի գաւառները և Դաղստանի Թիւրինսկի և Սամուրսկի վիճակները։

◆ Արգելելով հայերէն դասախօսութիւնների ընթերցումը Թիֆլիսի ժողովրդական համալսարանում, տեղական վարչութիւնը փակել է նաև Յովնանեան օրիորդաց դպրոցին կից գտնվող հայկական հանրակրթական դասընթացքները։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը դիմել է նահանգապետին, խնդրելով միջնորդել Կովկասի Փոխարքայի առաջ, որ Ալէքսանդրօպօլի անտառապետութեան Աջուչալու սահմանագլխի Փամբակի խճարանը կապալով, առանց աճուրդի, տրվի քաղաքային վարչութեան, երբ այժմեան պայմանագրի ժամանակամիջոցը լրանայ. (1910 թ. 1 նոյեմբերի)։

◆ Թիֆլիսի նահանգապետը, հաստատելով մսի նոր սակագինը, տեղեկացրել է քաղաքային վարչութեան, որ վարչութիւնը պարտաւոր է կարգադրութիւն անել, որ այդ սակագինը կախված լինի մսի խանութներում աչքի ընկնող տեղում, նաև որ քաղաքային առևտրա-տնտեսական մարմինը հետևէ, որ միսը վաճառվի սակագնի գներից ոչ աւելի գներով, խախտողներին պատասխանատւութեան ենթարկելով. ընդսմին նահանգապետը առաջարկել է Թիֆլիսի ոստիկանապետին կարգադրութիւն անել, որ ոստիկանութիւնը արգելէ միջնորդներին և փաշխառուններին տաւար գնել չէնականներից՝ մինչև ցերեկվայ ժամը 12-ը։

◆ Այն բոլոր հողաբաժինների գինը, որոնց գրաւել են զինուորական հաստատութիւնները այլ և այլ պէտքերի համար, գաւառական գնահատող մասնաժողովը իշխան Գ. Թումանօվի նախագահութեամբ ապրիլի 28-ին որոշել է 430,000 րուբլի։

◆ Պրօֆ. Պատոնը Մուխրանեան կամուրջի սիւների նախագիծը Թիֆլիսի քաղաքային վարչութեան կը ներկայացնէ մայիսի վերջը։

◆ Նկատի առնելով որ գնահատման տուրքի ամենախոշոր պարտապանները հէնց ամենահարուստ տանտէրերն են, մինչ չունևորները կամաց-կամաց, իրանց կարողութեան չափով, վճարում են քաղաքային գանձարկղին իրանց պարտքերը, Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը վճռել է հարուստ տանտէրերի վերաբերութեամբ ամենախստագոյն միջոցներ ձեռք առնել՝ վերցնելու նրանցից գնահատման տուրքերը. այսպէս օրինակ, չը բաւականանալով ժամանակաւորապէս գրաւելով կալուածքների եկամուտները, ժամանակ նշանակել տուրքերը վճարելու համար, և հէնց որ ժամանակը լրանայ, եթէ տուրքերը մուծված չը լինեն, աճուրդով վաճառել պարտատէրերի ինչպէս շարժական, նոյնպէս և անշարժ կայքերը։

◆ Հայոց դրամատիկական ընկերութեան օգտին ժողովարանում կազմած զբօսանքից զուտ արդիւնք մնացել է 1000-ից աւելի րուբլի։

◆ Դաղստանի շրջանի զինւ. նահանգապետի պաշտօնում, «Тер.» լրագրի ասելով, նշանակվելու է իշխ. Գ. Ի. Օրբելիանին։

◆ Այսօր, երեկոյեան ժամը 8-ին, նշանակված է կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը։ Քննվելու է 1908 թ. եկմտի նախահաշիւը և քարտուղարի ընտրութեան հարցը։

◆ Շաբաթ, ապրիլի 25-ին, երեկոյեան ժամը 9-ի մօտերը, Հաւլաբարում, 7-րդ քաղաքամասում, տեղի ունեցաւ մեծ հրացանաձգութիւն, որ տևեց մէկ ամբողջ ժամ, հետևեալ հանգամանքներում. Աւլաբարսկայա և Լազարեվսկայա փողոցների անկիւնում սկզբում մի կրակոց լսվեց և մի փոքր անց՝ սկսվեց կատաղի հրացանաձգութիւն երկու կողմից. կրակոցի ձայներին շտապեց մինգրէլսկի գնդի պահակախումբը, որը դիմեց Աւլաբարսկայա փողոցի կողմից լսվող հրացանաձգութեան կողմը, ճանապարհին ինքն էլ կրակելով։ Այդ ժամանակ դէպքի տեղը հասաւ Թիֆլիսի գնդի պահակախումբը Կախետինսկայա հրապարակի կողմից և նոյնպէս կրակ բացեց չարագործների վրա։ Ապա սկսվեցին կասկածելի անձանց ձերբակալութիւններ։ Հրացանաձգութիւնը շատ վախեցրեց հաւլաբարցիներին։ («Зак.»)

◆ Ամերիկայի Ուստր քաղաքի հայ գաղութը, ենթադրելով որ Լէօի յոբելեանը տօնվում է մայիսի 4-ին նոր տօմարով (ապրիլի 21-ին), այդ օրը մի հեռագիր է ուղղել մեր խմբագրութեան անդամ պ. Հ. Առաքելեանին, խնդրելով իբրև ներկայացուցիչ այդ քաղաքի հայ գաղութի, շնորհաւորել Լէօի յոբելեանը և նուիրաբերել հարիւր րուբլի։ Առաքելեանը պատասխանել է, որ յոբելեանը յետաձգվում է մայիսի 22-ին հին տօմարով։ Մասնաժողովը պէտք է չը մոռանայ յայտարարելու, որ օրը նշանակված է հին տօմարով։

◆ Կիրակի, մայիսի 4-ին, Թիֆլիսի ժողովարանում Շեստովը կը կրկնէ իր դասախօսութիւնը Լէօնիդ Անդրէևի մասին։

◆ Թիֆլիսում հրատարակվող «Закавказье» լրագրի խմբագիր Փոտուան 1907 թ. յուլիսի 4-ի պարտադիր կանոնները խախտելու համար Թիֆլիսի ժամ. գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ ենթարկվել է 100 րուբլի տուգանքի։

◆ Թիֆլիսի բնակիչ Ալէքսանդր Մայսուրաձէն, իբրև վնասակար անձն հասարակական հանգստութեան համար, աքսորվում է Օրէնբուրգի նահանգը զինուորական դրութեան ամբողջ ժամանակ։

◆ Շուշուց գրում են, որ Շուշու գաւառում մօրեխը մեծ քանակութեամբ արդէն երևացել է։ Միաժամանակ սկսվել են մօրեխը ոչնչացնելու աշխատանքները։

## ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

◆ Թիֆլիսի ոստիկանապետի կարգադրութեամբ պրիստաւները որոնում են 14 տարեկան Արշակ Ալիխանեանին, որն անյայտացել է Դվորցօվայա փողոցից, № 4 տնից։

◆ Ապրիլի 28-ին Արբուզնի հրապարակում № 348 կառքը անցել է 12 տարեկան Ալէքսանդր Կաբուդաշու վրայով։

◆ Ապրիլի 28-ին, պետական բանկի բաժանմունքի մօտ կանգնած կառքերից մէկի ձին կատաղելով սկսում է սլանալ Սերգիեվսկի փողոցով։ Փողոցով անցնող գնդապետի դուստր Աննա Ալէքսանդրօվնան, 65 տարեկան, պատահմամբ ընկնում է նրա ոտքերի տակ և ծանր ջարդուածքներ ստանում։ Նրան տեղաւորել են Միքայէլեան հիւանդանոցում։

◆ Ապրիլի 28-ին ոստիկանական պաշտօնեաները ձերբակալել են Ալէքսանդրօպոլից փախած աքսորական Իվան Շանչէշվիլուն։

## ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

—

◆ «Баку» լրագրին հաղորդում են, որ բամբակի առևտրով պարապող յայտնի վաճառական Բագրատ Գէորգեանը դիմել է Բագուի հայոց կուլտուրական միութեանը խնդրելով բանալ Բաղաքեկ գիւղում (Ապշերօնի մօտիկ) տարրական դպրոց, որպէսի նպատակի իրագործման համար Գէորգեանը համաձայն է յատկացնել միութեանը 10,000 րուբլի։

◆ Ապրիլի 24-ին Բագուի վրայով Կուբանի շրջանից եկել ու անցել են դէպի Անդրկասպեան երկիրը 30 մասնագէտ-ինժեներներ՝ մասնակցելու Տաշքենդում կազմակերպվելիք Թռչնացուցահանդէսին։ Այդ մասնագէտները զեկուցում պիտի պատրաստեն Թռչնապահութեան դրութեան մասին Ռուսաստանում և նրա ծայրագաւառներում։

◆ Մի քանի օր առաջ՝ ռուսաց գերեզմանատան մօտ երեկոյեան ժամը 8-ին մի ինչ-որ ռուս յայտնել է հերթապահ թաղապետին, որ մի քանի րօպէ առաջ մի քանի թուրքեր կանգնեցնելով իրան՝ ոյժով խլել են նրանից 5 կոպէկ՝ և մատնացոյց է անում հեռացող 7—8 հոգի թուրքերի վրա։ Թաղապետը ուզում է կալանաւորել, բայց թուրքերից մէկը կրակում է նրա վրա, թէև վրիպում է։ Սկսվում է գնդակաձգութիւն, և ժողովուրդը սարսափահար սկսում է փախչել։ Ցանցաւորները անյայտանում են և աջողվում է բռնել մէկին միայն։

◆ Քաղաքում լուր է տարածված, որ կօնսերվատօրիայի ուսանող Յարութիւնեանի սպանութիւնը կատարվել է կուսակցական հողի վրա, Ասխաբադի յեղափոխական կօմիտէտի որոշման համաձայն։ («Кс.»)

## ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

—

◆ Կառավարչական բարձր շրջաններին մօտիկ կանգնած շրջաններում խօսում են, որ մօտիկ ապագայում խոշոր փոփոխութիւններ պիտի տեղի ունենան ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան մէջ։

◆ Լուր է պտտում, որ բիւջէի քննութեան առիթով շարունակվող վիճաբանութիւնների ժամանակ ներքին գործերի մինիստր Ստոլիպինը յայտնել է, որ կառավարութիւնը մտադիր է վերացնել զինուորական դրութիւնները և գեներալ նահանգապետութիւնները։

◆ Աջակողմեան պատգամաւորների ասելով, կառավարչական բարձր շրջաններում դժգոհութեամբ են վերաբերվում աջակողմեանների սկսած արշաւանքին հրէաներին զինուորական ծառայութեան մէջ ընդունելու հարցի առիթով։ Բարձրաստիճան պաշտօնեաների մեծ մասը այժմ առհասարակ դատապարտում է հին քաղաքականութիւնը, որով սահմանափակում էին հրէաների իրաւունքները և առանձնացնում նրանց ռուս ազգութիւնից։ Հրէաներին ձուլելու համար սկզբունքով ցանկալի իրաւահաւասարութիւն տալը սակայն այժմ համարվում է վաղաժամ, քանի որ ուսումը ընդհանուր դարձնելու միտքը իրագործված չէ դեռ ևս, որովհետև «տգէտ ռուս ժողովուրդը» բարձրաստիճան պաշտօնեաների կարծիքով անընդունակ է թւում մրցելու «հարուստ օժտված» հրէական ցեղի հետ։

◆ Ռուսաստանում մի քահանայ, Գրոմօվ ազգանունով, մօտ ժամանակներս մահմեդականութիւն է ընդունել։ Կազանի թուրքերը հանգանակել են իրանց մէջ 10,000 րուբլի, որպէսզի տան նրան առևտրական գործ սկսելու համար։ («Б.»)

## ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

—

(Շարունակութիւն)

Րօդիչեվ. «Ես կը բաւականանամ այն ցուցմունքներով, որոնք անհրաժեշտ են զօրքի կազմը ֆիզիքական բարձրութեան վրա դնելու և վերանորոգելու համար։ Արդէն մենք հասել ենք երկրի ոյժերի լարման այն դրութեան, որի ժամանակ արտօնութիւն չունեցող նորակոչները ամբողջովին զօրքի մէջ են մանում և մնում են կամ սկսում են միալ միայն առաջին կարգի արտօնութիւն ունեցողները։ Ռուսաստանում, նորակոչների առողջութիւնը քննելու ժամանակ, մի էական պակասութիւն գոյութիւն ունի, այն է, որ նորակոչներին չեն կշռում։ Մենք պէտք է ցանկութիւն յայտնենք, որ զինուորական ծառայութեան կանոնադրութիւնը վերափոխելու ժամանակ օրէնսդրութեան առանձին ուշադրութիւնը ծանրանայ ընդունելութեան խստութեան վրա իւրաքանչիւր անձի վերաբերութեամբ։

«Ռուսաստանում մի չափ գոյութիւն չունի նորակոչին պէտքական ճանաչելու համար. քրիստոնեաների համար գոյութիւն ունի մի չափ, իսկ հրէաների համար գոյութիւն ունի մի ուրիշ չափ։ Պետական բոլոր գործերում ոչ մի կերպ չէ կարելի յանուն պետական անհրաժեշտութեան հրաժարվել իրաւունքի և արդարութեան սկզբունքից։ Պատգամաւոր Կրուպէնսկին սխալվում է միայն մի բանում. նա կարծում է, որ բոլոր հրէաներին չը պէտք է վերցնել զինուորութեան համար։ Ո՛չ, միանգամայն բաւական է այդ դէպքում արդարացի և սկզբնապէս խելացի լինել. հարկաւոր չէ հիւանդ հրէաներին վերցնել (ծափահարութիւն ձախակողմում, շարժում և աղմուկ աջակողմում)։

«Պարոններ, չէ՞ որ հրէական հարցը դէպի զինուորական ծառայութիւնն ունեցած վերաբերութեամբ առաջինը մեզ մօտ գոյութիւն չունի. իւրաքանչիւր ճորտական պետութեան մէջ հրէաները իրաւազուրկ են եղել և իրաւունքները նրանք ստացել են սովորաբար գիւղացիների ճորտական դրութիւնից ազատվելու օրերում, երբեմն միաժամանակ (շարժում)։ Ի հարկէ, նրա համար, որպէսզի անարդարութիւնը դադարի (կենտրոնից մի ձայն. «պէտք է դուրս գալ կադետների կուսակցութիւնից»), պէտք է նրան ստեղծել, պէտք է կործանել այն նախապաշարմունքները, որոնք այդ տեսակէտից գոյութիւն ունեն։

«Եթէ ալարմիստները*) այդ հարցի վերաբերութեամբ մի քանի անգամ փորձէին ուսումնասիրել և իրանց հարց տային, թէ ինչո՞ւ յանկարծ զինուորական ծառայութիւնից խուսափող 2000 հրէաների թիւը 1904 թ. 10,000-ի հասաւ, եթէ նրանք այդ հարցը տային իրանց և միաժամանակ աչքի անցնէին հրէական գաղթականութեան թւանշանները, այն ժամանակ նրանք կը հասկանային թէ ինչ է նշանակում այդ։ 1904 թ. 78,000 հրէաներ գաղթեցին և այդ օրվանից գաղթականութիւնը շարունակ առաջ է գնում և հասնում է մօտ 100,000 հոգու։ Տրամաբանական անհրաժեշտութիւն մի նոյն բացատրութիւնն է տրվում նաև մի ուրիշ երևոյթի, որի մասին խօսեց առաջին հռետօրը, որը մատնանիշ արաւ սահմանագլխային նահանգներից զինուորական ծառայութեան չեկածների թւի վրա։ Տեղական սահմանագլխային ազգաբնակութիւնը նոյնպէս մեծ թւով գաղթողներ տուեց։ Այդ գաղթականները միայն Ռուսաստանում չեն, նրանք բոլոր երկիրներումն էլ կան։

«Կրուպէնսկին ասաց, որ քանի հրէաները ազատ չեն միւս սահմանափակումներից, որոնք նրանց վերաբերութեամբ գոյութիւն ունեն, անարդարացի է ստիպել նրանց զինւորական ծառայութիւն կրել. սակայն այդ անարդարութիւնը վերացվում է ուրիշ ճանապարհով.—չը կան պարտականութիւններ առանց իրաւունքների, հաւասարեցրէք նրանց իրաւունքները, և դուք կոչնչացնէք անարդարութիւնը (ծափահարութիւն)։ Անարդարութեան տրամաբանութիւնը հրէաների վերաբերութեամբ յիրաւի երկիրը քայքայման է տանում (աղաղակներ «օհօ», ծիծաղ) ճիշտ այն կերպ՝ ինչպէս անարդարութեան վրա ծիծաղը վկայում է իրաւունքի զգացմունքի անկման մասին, ճիշտ նոյն կերպ նա ապացոյց է ծառայում ոչ թէ երկրի իրաւագիտակցութեան, այլ նրա պակասաւորութեան, ոչ թէ առողջ զարգացման, այլ լուծման (ծափահարութիւն ձախակողմում, սուլոց աջակողմում)։

«Չէ՞ որ, պարոններ, այդ արգումենտները այնքան հին են, ինչպէս ինքը աշխարհը. մենք արդէն ունենք Արևմտեան Եւրոպայի փորձը, ուր միւս ազգաբնակութեան հետ իրաւահաւասար հրէաները կատարում են զինուորական պարտականութիւնները (ձայներ՝ «Դրէյֆուս»։ Նրանք հանդիսանում են նոյնպէս քաջ զինուորականներ, բարեխղճաբար իրանց պարտականութիւնը կատարողներ, (ձայներ «օհօ», ծիծաղ)։ Դուք կրկին ծիծաղում էք (ձայներ «այո»)։ Ես կը կարդայի ձեզ օրինակներ զանազան երկիրների վարչութիւններից, բայց նրանք շատ երկար կը լինեն։—Ռուսաստանում, նաւատորմի մէջ հրէաներ չը կան, այնպէս որ նաւատորմում հրէաները ոչ անբարոյականացում, ոչ յեղափոխութիւն են սերմանել (ձայն. «վրէօրգեան կոչը»). այնուհետև հրէաները Ցուսիմայի կռւում միանգամայն անպարտ են, ոչ մի հրեայ այնտեղ չէ եղել (բուռն ծափահարութիւն ձախակողմում, սուլոց աջակողմում)»։

Բերելով զանազան օտարազգի զօրքերում ծառայող հրէայ օֆիցերների ցուցակը, Րօդիչեվը ասում է՝

«Ես կը սարսափեցնեմ այն տեղեկութիւններով, որ ես այս րօպէիս կը յայտնեմ (աղմուկ). գեներալ-լէյտենանտ Օտօլէնը, որ յաճախ զինուորական մինիստր է եղել և Իտալիայի թագաւորի զինուորական դաստիարակիչը,—հրեայ է (ծիծաղ)։

Կոմս Բօբրինսկի. «Ի՞նչ կայ ուրախանալու»։

Պօլովցեվ. «Ամենուրեք նզովված են հրէաները»։

Ձայներ. «Իսկ Գերմանիայում»։

Րօդիչեվ. «Այս րօպէիս, պարոններ, դուք ինձ մեծ խնդիր առաջարկեցիք. ես մոռացայ այն թերթը, որի մէջ այդ գրված է»։

Կոմս Բօբրինսկի. «Վերաքննութիւնը բացված է»։

Րօդիչեվ. «Այն փաստաթուղթը, որ ցոյց է տալիս 1870—1871 թ. թ. արշաւանքներին մասնակցած հրէայ զինուորների ցուցակը»։

Ձայներ. «Մենք խնդրեցինք Գերմանիայի վերաբերութեամբ»։

Րօդիչեվ. «Հէնց ես էլ գերմանական թւանշաններն եմ կարդում»։

*) Խռովեցուցիչ լուրեր տարածող այր, կին։

---

…նարէն իփսիլօնին=ֆրանս. u։

«Սուրբ», «կուռք», «իւր», «հիւղ» և այլ հազարաւոր դէպքերում «ւ» ձայնաւոր է, և ոչ թէ բաղաձայն վ, այնպէս պէտք է ասէինք սուրբ, կուռք, իւր, հիւղ...

Նախնական «եւ» երկբարբառը փակ վանկում, «ալեւր», «բեւր», «հարեւր», «եւղ» և այլ բառերում, արտասանվելիս է եղել, ինչպէս և յունարէնում՝ իբրև ձայնաւոր, ֆրանս. eu, որի ապացոյցն այն է, որ այդ բառերի ուղղագրութիւնը փոխելիս գրել են ալիւր, բիւր, հարիւր, իւղ, և ոչ թէ ալեվր, բեվր, հարեվր, եվղ, և ժողովրդական բարբառներում դրանք փոխվել են պարզ ձայնաւորների—ալիր, ալուր, հարիր, հարուր, եղ, և այլն։ Այս փաստերը բաւական են ցոյց տալու, որ մեր «ւ»-ը սկզբնապէս եղել է ձայնաւոր=իփսիլօնին=ֆրանս. u։

Յունարէնը «w» հնչիւնը արտայայտելու համար ունէր նախապէս դիգամմա (=սեմական վավ), որ յետոյ դուրս ընկաւ այբուբենից, փոխարինվելով ֆի-ով։ Իսկ իփսիլօնը ձայնաւոր էր, թէ առանձին գործածվելիս և թէ երկբարբառների մէջ։

Յունարէն այբուբենը հիմք դարձաւ լատինական այբուբենին, և սրանից առաջ եկան եւրոպական այբուբենները։ Արդ լատինական այբուբենը փոխ առաւ յունաց դիգամման իբրև f, իսկ յունաց իփսիլօնը (v) իբրև ձայնաւոր (հայերէն ու), և գրում էր dvrvs, solvtvm, avrvm, silva, ու կարդում՝ դուրուս, սօլուտում, աուրում, սիլու-ա։

Այդ իփսիլօն=ւ հնչիւնը մի զարմանալի յատկութիւն ունի բոլոր լեզուների մէջ, այսինքն, որ թէ երկբարբառների մէջ և թէ առանձին գործածվելիս՝ ուրիշ ձայնաւորից առաջ «w» հնչիւնի է փոխվում Basileys (արքայ) ուղղականից սեռականը դառնում է basilevos. նախնական լատինական եռավանկ silwa (սիլ-ու-ա=անտառ) փոխվում է երկու վանկ silva (սիլվա). քառավանկ dissol-v o փոխվում է եռավանկ dissolwo. զենդերէն bazu (=բազուկ) բառի գործիականը դառնում է bazvâ, ahu-âo դառնում է ahvâo. սանսկրիտերէն tanu ուղղականից տրականը դառնում է tanwe, գործիականը tanwa, madu asti նախադասութիւնը դառնում է madwasti (—մեղր է)։ Այսպէս և հայերէն նախնական հնչիւնը գաւիթ (=գաօիթ) դարձել է գավիթ, լեզու+ի դարձել է լեզվի, Բագու+այ դարձել է Բագվայ։ Նոյնն է և սեմական լեզուների մէջ, որոնց միևնոյն վավ գիրը երբեմն ձայնաւոր է (ու, o) և երբեմն բաղաձայն (վ)։

«Ի» և «ու» հնչիւնների w-ի փոխվելու այս յատկութիւնը հասկանալի կը դառնայ մեզ՝ եթէ ուշադրութիւն դարձնենք, որ այդ տառերը արտասանելու ժամանակ շրթունքները մօտենում են իրար. իսկ երբ ուրիշ ձայնաւոր արտասանելու համար այդ հուպ եկած շրթունքների դրութիւնը հարկաւոր է լինում փոխել, օրինակ ւ-ա, ու-ա արտասանելու համար՝ շրթունքների արագ շարժումից օդի ումեղ հոսանք է դուրս գալիս հուպ եկած շրթունքների միջով, այսինքն ստացվում է «w» հնչիւնը։ Բաւական է երկու-երեք անգամ արագ կրկնել Բագու-այ, Բագու-այ, որ անզգալի կերպով այս եռավանկ բառը դառնայ երկվանկ «Բագ-վայ»։ Ուրեմն «ւ» և «ու» հնչիւնների «w»-ի փոխվելը բնական, օրգանական երևոյթ է ոչ միայն մեր, այլ և բոլոր լեզուների մէջ։ Ինքն ըստ ինքեան ձայնաւոր «ւ» կամ «ու» որոշ դէպքերում փոխվում է բաղաձայն «w»-ի։

Հիմա հետաքրքրական է տեսնել, թէ ինչպէս են վարվել ուրիշ ազգերի այբուբենները՝ այս երկձայն «ւ» և «ու» հնչիւնները արտայայտելու համար։

Սանսկրիտ և զենդ այբուբենները ի բնէ ունէին յատուկ նշանագրեր «ու» ձայնաւորի համար և «վ» բաղաձայնի համար։ Ուստի ամեն անգամ երբ արմատական «ու» ձայնաւորը ուրիշ ձայնաւորի առաջ պատահելիս բաղաձայնի հնչիւն էր ստանում՝ ուղղակի գրում էին «վ» բաղաձայն, առանց ուշադրութիւն դարձնելու բառի ստուգաբանական ձևի ուղղագրութեան վրա։ Այսպէս բազ-ու, բայց բազ-վա, տան-ու—տան-վէ, տան-վա. կաւս (կով)—կավյա (կովային)։

Յոյները, որ «w» հնչիւնը արտայայտում էին հին ժամանակ դիգամմայով՝ «ւ» ձայնաւորը «վ»-ի փոխվելիս՝ «ւ»-ի փոխարէն գործ էին ածում դիգամմա.—բասիլեւս, բայց բասիլեվօս, (արքայ). Նաւս, բայց նէվօս (նաւ)։

Լատինացիք, որ յունական այբուբենն ստացան առանց «w» հնչիւնն արտայայտող տառի, նկատելով «ւ» հնչիւնի երկձայն լինելը՝ շուտով գործնական միջոց գտան. միևնոյն v (իփսիլօն) գիրը փոքրիկ ձևափոխութեան ենթարկելով՝ կազմեցին մի գրից երկու գիր, v և u, առաջինը պահելով բաղաձայնի համար (վ), իսկ երկրորդը ձայնաւորի համար (ու). այնպէս որ փոխանակ առաջվայ նման գրելու servvs (սերուս), plvvia (անձրևային), սկսեցին գրել servus, pluvia, յունական նաւս (նաւ) բառը, «ի» ձայնաւորից առաջ գրեցին v-ով navis, իսկ բաղաձայնից առաջ u-ով—naufragium (նաւաբեկութիւն)։

Լատինական այբուբենի հետևողութեամբ եւրոպական կենդանի լեզուներն էլ ունեցան «u» և «v» առանձին գրեր՝ ձայնաւորի և բաղաձայնի համար, որոնք միևնոյն յունական իփսիլօնից են ծագում, և լատիներէնի նման, առանց ստուգաբանական ուղղագրութեան հետևելու գործ են ածում փոփոխակի այս երկու գրերը՝ նայելով արտասանութեան։ Օրինակ ֆրանսերէն միևնոյն նաւս—navis արմատից ծագած բառերը գրում են navire և naufrage, janus և janvier (յանուս և յունվար), je meus (շարժում եմ) և nous mouvons (շարժում ենք)։

Այսպէս ուրեմն տեսնում ենք, որ հնդկաեւրոպական այբուբենները դեռ հազարաւոր տարիներ առաջ վճռել են «ւ» երկձայն հնչիւնի հարցը կարուկ կերպով.—առանց ուշադրութիւն դարձնելու բառի ստուգաբանական ուղղագրութեան վրա՝ «վ»-ով են արտայայտել այդ տառը՝ բաղաձայն հնչվելիս, և «ու»-ով՝ ձայնաւոր հնչվելիս. իսկ լատինական այբուբենը, որ սկզբնապէս չունէր «վ» արտասանութեան յատուկ գիր, և նրա հետևողութեամբ բոլոր եւրոպական լեզուները՝ նոյն v գիրը բարեփոխելով՝ ստեղծել են երկու գիր—u՝ ձայնաւոր և v՝ բաղաձայն, այսինքն նոյն գրի տարբեր հնչիւնների համար հնարել են տարբեր գրեր. մտցրել են surorcudaG սկզբունք։ Միայն սեմական այբուբեններն են, որ մինչև հիմա պահել են իրանց աւանդական վավը՝ թէ ձայնաւորի համար և թէ բաղաձայնի, և այս վերջին գրութեան սխաւեմով (սեմական այբուբենով) օգտվում են այժմ թուրքերը, պարսիկները, արաբները և այլն։

Այս միևնոյն սեմական սխաւեմին հետևողութիւն է և պ. Աղայեանի մտցրած րէֆօրմը, որով «ւ»-ը կամ փոքր «վ»=վաւի, և՛ բաղաձայն է (աւազան, լեզւի) և ձայնաւոր (տուն, իւր)։

(Կը շարունակվի)

Ստ. Մալխասեանց

Պօլովցեվ. (տեղից). «Բիսմարկը միթէ հրէայ չէր»։

Բոդիչեվ. «1101 հրէայական համայնքների ցուցակը, որոնց անդամները մասնակցեցին 1870—71 Թ. Թ. արշաւանքին 448 հրէայական զինուորների ցուցակը, որոնք վիրաւորվեցին կամ սպանվեցին 1870—71 Թ. Թ. արշաւանքի ժամանակ, այն հրէայ զինուորների ցուցակը, որ 1870—71 Թ. Թ. պատերազմին մասնակցելու համար Երկաթէ Խաչի արժանացան»։

Կոմս Բօբրինսկին (տեղից). «Իսկ ինչպիսի՞ է հրէական գոռոզութեան, անբարտաւանութեան ստատիստիկան»։

Բոդիչեվ.—Պրուսիայում 1772 Թ. զինուորների ընդհանուր Թւի նկատմամբ հրէաները կազմում էին 1,61°/ₒ, 1893 Թ. 3,80°/ₒ. օֆիցէրների նկատմամբ Պրուսիայում հրէաներին օրէնքը չէ արգելում օֆիցէրներ դարձնել, սակայն գործնականում (աղմուկ)... այո, այնտեղ անտիսեմիտներ շատ կան և Բիսմարկը դէպի անտիսեմիտները վերին աստիճանի անյարգանքով էր վերաբերվում. Նա ասաց, որ անտիսեմիտիզմը անգիտակ մարդկանց սօցիալիզմն է (ծիծաղ, աղաղակներ «բրաւօ», ծափահարութիւն ձախակողմում)։ Ես ասում եմ փափուկ կերպով, Բիսմարկն ասաց այլ կերպ,—մեզ մօտ դա անգիտակների հայրենասիրութիւնն է (ծափահարութիւն ձախակողմում, աղաղակներ «բրաւօ»)։ Ես կարող էի ձեզ տասնեակ հեքիաթներ օրինակ բերել, որ ռուսաց պատերազմում հրէաներ են եղել, որոնք ստացել են Գէօրգիեվսկի խաչեր, որոնք արիաբար կատարել են իրանց պարտքը (շարժում աջակողմում)։

«Ահա թէ ես ձեզ ինչ կասեմ. (աղմուկ)։ Եթէ դուք կամենում էք, որ զօրքում իւրաքանչիւր զինւորը իր պարտքը կատարէ, անձնատուր չը լինելով և չը մեռնելով, հարկաւոր է, որ նա գիտնայ, որ նրան չեն վիրաւորի իր ծագման համար, որ այն ժամանակ, երբ նա արիւն է Թափում հայրենիքի համար, այդ հայրենիքում նրա հարազատներին, զոհողութիւններ կատարող արիւնակիցներին չեն ծաղրում, չեն նըշաւակում («բրաւօ», երկարատև ծափահարութիւն ձախակողմում)։ Մեր երկիրը ծանր պարտութիւն կրեց, ծանր՝ ես առաւել այն պատճառով, որ այդ պարտութիւնը նրան պատիւ չէ բերում։ Այդ պարտութեանը մենք հասանք, բորբոքելով ազգայնական ատելութիւնը, բացասելով իրաւունքը, Ռուսաստանը արտօնեալների և ոչ-արտօնեալների բաժանելով»։

Կոմս Բօբրինսկի. «Բաժանելով Ռուսաստանը Վարշավայում»։

Բոդիչեվ. «Միայն, միմիայն հրաժարվելով այդ ճանապարհից, միմիայն ռուս քաղաքացու մէջ մարդու հաւասար իրաւունքներ, հաւասար պարտականութիւններ տեսնելով, միմիայն այդ կերպ դուք կը վերածնէք Ռուսաստանը, միմիայն այդ ճանապարհով ուժեղ, մեծ երկրի արժանի զօրք կը ստեղծէք դուք։ Ուրիշ ճանապարհ չը կայ բնաւ» (աղաղակներ «բրաւօ», ծափահարութիւններ)։

Պուրիշկեվիչը տեղից. «Հրէական շահանոցի լաքէյ» (սուլոց աջակողմում)։

Զայեեր. «Խնդրում ենք նիստը ընդհատել»։

Յայտարարվում է մի քառորդ ժամով միջարար։

Նիստը վերսկսվելով, Բուլատը լիտովցիների ծառայութիւնից խուսափելու պատճառները բացատրում է հրէական, լիտովական և լեհական գաղթականութեան աճմամբ։—«Խուսափելու պատճառը, մեր ծանր դրութեան մէջ, նիւթական, բարոյական և հոգևոր է։ Եթէ դուք պահանջում էք, որ բոլոր ազգերը բարի քաղաքացիներ լինեն, հաւասարեցրէք բոլոր ազգերը. եթէ պահանջում էք, որ բոլոր կրօնները հաւասար լինեն պետութիւնը պաշտպանելու գործում, հաւասարեցրէք բոլոր կրօնները։ Հետաքրքրական է այն հարցը՝ թէ ազնւականները ինչ չափով են խուսափում զինուորական ծառայութիւնից (ծափահարութիւն ձախակողմում), նաև վաճառականները, արտօնեալ դասակարգերը»։

Վերջում հռետորը կարդալով աշխատաւոր խմբակի պատճառաբանված բանաձևը, յայտնում է, որ աշխատաւոր խմբակը դէմ է 1908 Թ. նորակոչների Թիւը շատացնելու օրինագծին։

Խասմամեդօվը մահմեդական ֆրակցիայի անունից վկայում է, որ մահմեդականները մասնակցել ու մասնակցում են հանուր հայրենիքի պաշտպանութեան գործում (ծափ. կենտրոնում և աջակողմում) այնտեղ և այն ժամանակ, ուր և երբ պետական իշխանութիւնը կոչում է կրելու այդ մեծ պարտականութիւնը (ծափ. աջակողմում)։ Բացի դրանից շատ մահմեդականներ յօժարակամ մտել են օֆիցէրների շարքերը։

Ապա հռետորը մատնանշում է, որ մահմեդական զինուորները զուրկ են իրանց կրօնական ծէսերը և սովորութիւնները կատարելու հնարաւորութիւնից։ Հարկաւոր է հաւասարեցնել բոլոր ազգութիւնների իրաւունքները և վերականգնել ներկայացուցչական իրաւունքը օրէնսդրական հաստատութիւններում. (ծափահարութիւն ձախակողմում)։

Պուրիշկեվիչը ռուսաց զօրքի մէջ ոչ մի ազգութիւն չէ ճանաչում. բոլորն էլ մի ոգով են ազդըված, բոլորն էլ գնալու են՝ ուր նրանց կառավարիչն է առաջնորդում։ «Զամբուլօվսկու յիշատակած փաստաԹղԹերից երևում է, որ հրէաները անբարոյականացնում են ռուսաց զօրքը։ Յիշելով Մանջուրիայի և Կվանտունի դաշտերի մօտիկ անցեալը, մենք գիտենք, որ ոչ Թէ կուլելու կամ մեծ հայրենիքը, նրա պրեստիժը ու շահերը պաշտպանելու նպատակով են հրէաները լցրել ռուսաց զօրքի շարքերը, այլ այդ արել են նրանք պրօպագանդայի նըպատակով. (աղմուկ սուլոց)։ Ես չեմ խօսում սեփական կարծիքներիս և անձնական ենԹադրութիւններիս հիման վրա, այլ պարբերական մամուլի էջերից, ոչ այն պարոնների, որին դուք սև-հարիւրեակային էք անուանում, այլ այն, որին Թէև դուք չէք համակրում, բայց որին հաշւի է առնում Ռուսաստանի մտածող մեծամասնութիւնը—այսինքն «Новое Время»-ի էջերից. (աղմուկ, ծիծաղ ձախակողմում)։

«Ուստի և, յանուն ապագայի, յանուն հայրենիքի, նրա հզօրութեան և փառքի, մենք պէտք է զրկենք մեզ ռուսաց զօրքերի շարքում հրէաներ տեսնելու բաւականութիւնից, հէնց դրանով վանելով նրանց՝ երկիրը պաշտպանելու մեծ պատւից, երկիր, որը մեզ համար հայրենիք է, իսկ որը նըրանց համար օտար։ Հէնց դրանով մենք կարգելենք նրանց ուրիշ քաղաքական իրաւունքներ ստանալու։

«Ո՛չ, քաղաքական իրաւունքներ դու չես ունենայ, հրէայ ժողովուրդ, որովհետև չես կրում այն պարտականութիւնը, որպիսի առաջին սրբազան պարտականութիւնն է հանդիսանում—պաշտպանել այն երկիրը, որը քեզ կերակրեց և երջանկութիւն պարգևեց, որը քեզ հնարաւորութիւն տուեց ապրել և զարգանալ։ Ես դէմ եմ նաև դրամով զինւորական ծառայութիւնից ազատելու առաջարկութեան։

«Ինձ չէ զարմացնում Բոդիչեվի ասածները։ Եթէ ես «Рѣчь» լրագրի աշխատակիցը լինէի—չեմ կարող այդպիսի ստորութիւն Թոյլ տալ—եԹէ ես Պուրիշկեվիչը չը լինէի, այլ պ. Բոդիչեվ, գուցէ ես էլ «մի շահու» համար նոյնը անէի։ Բայց կարծում եմ, որ Պուրիշկեվիչները այդ բանին ընդունակ չեն, ընդունակ են Բոդիչեվները։ Նրան է պատկանում «վաճառվում է հրապարակային աճուրդով» խօսքերը»։ (Աղմուկ, ձայներ՝ «կանգնեցնել պօգրօմշչիկին»։ Նախագահը զանգահարում է)։

Շեվցօվը ասում է, որ հրէաներն անպէտք են զինւորական ծառայութեան համար։ Թէև այդ հռետորը չէ կարող հերքել, սակայն կարծում է, որ ռուսներից էլ շատերը անպէտք են զինւորական ծառայութիւնը կատարելու։ «Դուք, աջակողմեաններ, չափազանց սխալվում էք, կարծելով Թէ եԹէ զօրքում հրէաներ չը լինեն, երկրում խաղաղութիւն, հանգստութիւն կը տիրէ։ Նըշանակում է, հրէաների փոխարէն միայն պէտք է աղքատ ժողովուրդը ծառայէ»։

Զերվինսկին կարծում է, որ ի զուր տեղը մէջ է բերված ազգաբնակութեան մի խըմբակի զինւորական պարտականութիւններից ազատելու հարցը։

Բօբեանսկին կարծում է, որ Ռուսաստանումն էլ կարելի և ցանկալի է մտցնել տերրիտօրիալ սիստեմ։ Զինւորներին կանոնաւոր դաստիարակելու միջոցներով կարելի է այն կէտին հասնել, որ զօրքի մէջ մարդիկ իրանց կը զգան իբրև մայրենի օջախում։ Իւրաքանչիւր ազգութիւն զօրքի մէջ կը գիտակցէ, որ այդ զօրքը իրանն է. այն ժամանակ յիրաւի «մեծ Ռուսաստանի մեծ զօրք կը ստեղծվի»։

Ժամը 1 և 45 րօպէին նիստը փակվում է երեկոյեան նշանակելու պայմանով։ («Հ. Գ.»)

(Կը շարունակվի)

## ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 29 ապրիլի

«Մշակի» 70-րդ համարում, «Ճանապարհորդական ակնարկներ» ԹղԹակցութեանս մէջ ես, ի միջի այլոց, նկատել էի մի փաստ, որ «Խատիսեանը և Մատթէոս վարդ. ՄատԹէոսեանը Թոյլ են տալիս իրանց ներկայութեամբ բարոյական ճնշում և վիրաւորանք հասցնելու մի հիւանդ մարդու, որը արդէն մի օր առաջ յօժարակամ տուել էր իր լուծման»։

Այդ նկատողութիւնից դժգոհ Մատթէոս վարդապետը և Կոստ. Խատիսեանը, «Մշակի» № 90-ի մէջ յայտնելով որ այդ նկատողութեան մէջ իրանց հասցէին իբր Թէ ես ասել եմ, որ նրանք «գործ են դնում ճնշումն և վիրաւորանք հասցնում հիւանդ մարդկանց», առաջարկում են հրատարակել. «Որ քաղաքում, որքա՞ն և ի՞նչ վրա է գործադրված բռնութիւն և ի՞նչ հասցրած վիրաւորանք»։

Նախ՝ ըստ էութեան պէտք է նկատեմ դժգոհներին, որ իմ գրածից դեռ ես չէ երևում, որ այդպիսի մեղադրանք ես բացարձակօրէն ուղղում եմ նրանց հասցէին։ Ես միայն ասում եմ, որ նրանք չը պէտք է Թոյլ տային։

Երկրորդ՝ իմ ակնարկս «բարոյական ճնշման» մասին է, այլ ո՛չ «ճնշման» մասին, որը, ինչպէս երևում է, ֆիզիքական մաքով են ըմբռնում նրանք։

Այդ Թաւցիկ նկատողութիւնից յետոյ, ես կաշխատեմ կատարել դիմողների ցանկութիւնը։

Ուրեմն բարեհաճեցէք լսել։ Ակնարկածս փաստը տեղի է ունեցել Մերվ քաղաքում. բարոյական ճնշման և վիրաւորանքի ենԹարկվող հիւանդ մարդը» Դաւիթ Մելիք-Մկրտչեանցն է։

Բարոյական ճնշում եմ համարել ես այն փաստը, որ հասարակական ժողովի մէջ հանգանակութեան ստորագրութիւնները բաւարար չը համարելով, նրա յաջորդ օրը վերոյիշեալ պարոնին հրաւիրել էք հիւրանոց՝ ձեր համարը, և առաջարկել էք յօժարակամ ստորագրած գումարն աւելացնել։

Դուք, յարգելի հայր սուրբ, դիմել էք մօտաւորապէս հետևեալ խօսքերով. «Այս դուք էք մօտ 50 րուբլի գրել։ Ինչքա՞ն քիչ էք գրել»։ Իսկ պ. Խատիսեանը ձեզ հետ միասին շարունակել է իր «համոզումները» նուէրն աւելացնելու մասին։

Այդ միջոցին դուք եղել էք երեքով միասին, ուրիշ վկաներ չեն եղել. միայն վերջում մտնում են տեղացի երկու պարոններ և ընդհատվում է խօսակցութիւնը, որից Մելիք-Մկրտչեանցը դուրս է գնում վրդովված։

Այդ փաստը ձեզ լաւ յայտնի է։ «Բռնութիւն» բառը ես չեմ գործ ածել, բայց երբ դուք յիշում էք, այդ էլ կաւելացնեմ։

Այն պարոնին (Մուրադ), որին դուք ուղարկում էիք առաջին օրը տներից Թէ բազարից մարդկանց հաւաքելու, նոյն մարդուն դուք յաջորդ օրը ուղարկել էք նաև վերոյիշեալ Մելիք-Մկրտչեանի մօտ և նա այնքան ոգևորված է եղել ձեր յանձնարարութեամբ, որ, մի քանի անգամ «գնանք» ասելուց յետոյ, աւելացնում է. «ասել են՝ վեր առ հետդ բեր»։

Կարծեմ օձիքից չը պէտք է բռնէր քարշ տար, որպէսզի ճնշումն բառը ասացական լինէր։

Արդ՝ այդչափ հրամայողական չէշտը «կամաւոր տուրքի» խնդրում ինչպէս կարելի է բացատրել, եԹէ ոչ վիրաւորանք, բարոյական ճնշումն, մինչև իսկ քաղաքավարի բռնութիւն, որ չը պէտք է տեղի ունենար գոնէ։

Ի վերջոյ պիտի ասեմ, որ հանգանակութեան այն ազդեցիկ ձեր, որի գործադրութեանը ականատես եմ եղել ես անձամբ, որի խուսափողների հետից շարունակ սուրհանդակներ ուղարկելը, նուէր կատարելու Թեան հասցրած ձեր գործադրած, կուլտուրական եղանակը «բարոյական ճնշումից» զատ ուրիշ բնոյԹ չէր կրում։

Ցաւում եմ՝ եԹէ ոչ հրապարակօրէն (Մերվի եկեղեցու մէջ յիշված փաստի ընդդիմը ընդունելով), գոնէ ձեր սրտի խորքում կը խոստովանէք ասածներիս ճշմարտութիւնը։

Աշխատակից

—

Բագու, 26 ապրիլի

«Մշակի» № 87-ում պ. Լևոն Ասլանեանը իր «Մի կարևոր խնդիր» ԹղԹակցութեան մէջ գրում է, Թէ բագուեցիք, ի յիշատակ հանգուցեալ Հայրիկի այցելութեան, հանգանակել էին 30,000 ռ. և ցանկացել մի վայելուչ վեհարանի կառուցման հիմք դնել նախաձեռնութեամբ պ.պ. Մ. Արամեանի և Հ. Մելիքեանի և որ այդ գումարից յիշեալ նպատակով փոխադրվել է Էջմիածին միայն 4500 ռ., իսկ Թէ ինչ եղան յարգելի պարոնների մօտ ժողոված գումարները, այդ մասին կարող են բացատրել իրանք...։

Որովհետև այդ հարցում ես եմ ունեցել ակտիվ մասնակցութիւն, ուստի կարևոր եմ համարում յայտնել հետևեալը.

1) Ինձ յայտնի չէ, Թէ որքան պիտի հանգանակէին կամ որքան են հանգանակել Մելիքեանը և ուրիշները և որքան են փոխադրել յիշեալ նպատակով Էջմիածին, որովհետև այդ ժամանակ եղել եմ արտասահմանում, 2) եկեղեցական կալուածների և գումարների գրաւումից յետոյ, պ. Մ. Արամեանը, որի մօտ գտնվում էին այդ գումարները, յանձնել է ինձ 2574 ռ. 50 կ., 3) համաձայն հանգուցեալ Հայրիկի հրամանի 1903, 1904 և 1905 Թ.Թ. Թէ այդ և Թէ ուրիշ ժողոված գումարներ փոխադրել եմ իրան Հայրիկին։

Բաղդասար Դօլուխանեան

## ՊԱՏԱՍԽԱՆ Պ. ԼԷՕԻՆ

—

Դուք բարեհաճել էք «Վտակի» № 89-ի մէջ մի նամակ զետեղել, որով պահանջում էք տպագրել այն բողոքները և տրտունջները, որ ստացել ենք Արփիարի սպանութեան դէպքի առիԹով ձեր բռնած ընԹացքի մասին։ Այն օրից, երբ ձեր յօբելեանը տօնելու հարցը հրապարակի վրա դրվեց, մենք որոշեցինք որևէ կերպով խոչընդոտ չը հանդիսանալու համար, մանաւանդ որ մենք համակրութեամբ վերաբերվեցինք այդ յօբելեանին, չը տպել որևէ յօդուած ձեր դէմ։ Տրտունջներ ձեր վարմունքի մասին Թէ Արփիարի սպանութեան դէպքի, Թէ հանգուցեալ Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանի մահվան առիԹով մենք ստացել ենք Թէ բերանացի և Թէ գրաւոր, բայց, վերոյիշեալ պատճառով, մենք չը տպագրեցինք, և նոյնիսկ մի քանի կտորներ, որոնք այս և այն յօդուածի մէջ շարվել էին, տպագրութիւնից յետոյ, սրբագրութեան ժամանակ հանվել են խմբագրի ձեռքով։ Ահա ինչ պատճառով մենք տպել չենք կարող, բայց եԹէ դուք անպատճառ կամենում էք իմանալ ովքեր են տրտունջ և բողոք արտայայտել Թէ բերանացի և Թէ գրաւոր, կարող էք մտնել մեր խմբագրութիւն, կամ մի մարդ ուղարկել, և մենք ձեզ կը յայտնենք նրանց անունները։

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

29 ապրիլի

Ներքին

ԽԱՐԿՕՎ։ Վախճանվեց գեղարուեստի Թէօրիայի պրօֆէսօր Բեդլինը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Առևտրի մինիստրը Թոյլատրեց մայիսի 3-ին Գրօզնիա քաղաքում գումարել Տէրսկի նաւԹարդիւնաբերողների համագումարը։

Ապրիլի 28-ին Կուրմակօվի նախագահութեամբ վերջացան այն խորհրդակցութեան նիստերը, որին պաշտօն էր տրված քննել լեռնային վարչութեան մշակած նախագիծը՝ Բագուի գաւառի պետական նաւԹային հողաբաժինների աճուրդների պայմանների մասին։ Լեռնային վարչութեան մշակած նախագիծը, մասնաժողովի արտայայտած կարծիքների հետ միասին, երկրորդ անգամ կը քննվի շահագրգռված վարչութիւնների անդամների միջվարչական յանձնաժողովում, ապա մինիստրների խորհրդի միացեալ նիստում։

Արտաքին

ՎԻԷՆՆԱ։ Ապրիլի 27-ի երեկոյեան ժամանեց ինկօգնիտօ դանիական Ֆրէդէրիկ Թագաւորը։

Ցէտինէից հեռագրում են, որ ապրիլի 26-ին իշխան Նիկոլայի, իշխանական տան անդամների, մինիստրների, դիպլօմատիական մարմնի, բարձրաստիճան պաշտօնեաների և բազմաԹիւ ժողովրդի ներկայութեամբ կայացաւ Անտիվարիի նոր րեզիդէնցիայի հանդիսաւոր հիմնադրութիւնը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 Թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քԹի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորԹու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԳՋԵԼԻԵՎ—1—2 ժ. ականջի, քԹի և կոկորդի։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Ե. ԳՈՒՐԳԵՆՕՎ—12—12½ ժ. կանանց և մանկաբարձութեան։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Ե. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ. և մորԹու հ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ
Ա. Միխիթարեանց
Ընդունում է հիւանդներին. մասնագիտութիւն՝ սիֆիլիս, միզային, վեներական և մորԹու հիւանդութիւններ. առաւօտեան 12—2 ժ., երեկ. 5—7 ժ., Սօլօլակ, Բեհբութեան փողոց № 33.
(ա. օ.) 100—42

ԱԴՕԼՖ ՌՈՒԴԷ
Ժողովրդական դպրոցի
ՄԵԹՕԴԻԿԱ
Փոխադրեց գերմաներէնից
Յովհաննէս Տէր-Միրաքեան
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
Ներածութիւն. Պատմութեան նախաշաւիղների ուսուցումը. Պատմութեան ուսուցումը. Աշխարհագրութեան ուսուցումը. Բնագիտութեան ուսուցումը. Հայոց լեզուի ուսուցումը. Թւաբանութեան ուսուցումը. Երկրաչափութեան ուսուցումը. Ձևաբանական ճշմարտութիւններ
ԳԻՆՆ Է 1 Ր. 50 Կ.
Կազմված՝ 1 ր. 90 կ.
Դիմել, Тифлисъ, книжный магазинъ „Гуттенбергъ“, Г. И. Галустяну.
Գրախանութի ցուցակը ցանկացողներին ուղարկվում է ձրի։
(հ. ու. ե.) 10—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտնում է գիտութիւն ընդհանուրի, որ Քաղաքային Դումայի ներկայ տարվայ ապրիլի 24-ի որոշման համաձայն սահմանված է տակսա՝ տաւարի միսը 15 կ., ոչխարի միսը 15 կ. և գոմէշի միսը 12 կոպէկ. վերոյիշեալ տակսան կը սկսվի գործադրվել, երբ նա կը յայտարարվի «Кавказъ» լրագրում։ ԵԹէ մսագործները խախտեն տակսան, դրա դէմ կարող են գանգատներ յայտնել ընդհանուր ոստիկանութեան ագէնտներին, քաղաքային առևտրա-տնտեսական ոստիկանութեան ագէնտներին և Քաղաքային Վարչութեան 4-րդ բաժանմունքին։ 3—3



(22, 25, 30, մ. 6,) 117521 4—3

ԳՐԻՄՕ ԵՒ ԸՆԿ. դեղագործների։—Ռուսաստանում Թոյլատրված։
ՄԱՍՏԻԿՕԻ ՍՐՍԿՈՒՄ
Զգուշացէք կեղծումներից

Երկարամեայ և բազմաքանակ աջողութիւնները ապահովում են, որ նա կտրուկ կերպով գործում է պերելօյի (հօնօրէյ) ժամանակ։ Կարճ ժամանակամիջոցում ՄԱՍՏԻԿՕՆ բժշկում է ամենայարատև արտահոսութիւնը։
ՊԱՀԵՍՏԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՒՈՐ ԴԵՂԱՏՆԵՐՈՒՄ
(15 և 30) 14—10

Զգուշացէ՛ք կեղծումներից
ՍԱՆՏԱԼ ՄԻԴԻ
(Թոյլատրված Ռուսաստանում)

Չը կայ լաւագոյն միջոց, քան Սանտալ Միդին, պերելօյի (հօնօրէյ) ամենայարատև դէպքեր բժշկելու համար։
Սանտալ Միդիի յատկութիւնը և էսսենցիայի մաքրութիւնը Թոյլատրում են գործածել առանց վնասելու մարսողական գործարաններին։
Պահանջել՝ որ գրված լինի „Midy“ (MIDY)
Պահեստը Ռուսաստանի գլխաւոր դեղատներում։
(շ. 1 ան. չ.) 25—23